№ 2 (133) XIII ՏԱՐԻ ՓԵՏՐՈՒԱՐ 1903

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

ՀԱՒԱՔԱԿԱՆ ՊԱՐՏԱՃԱՆԱՉՈՒԹԻՒՆ

Զափազանց սուղ նստեց հայերիս մեր վերածնութեան շարժման սկզբնաւորութիւնը։

Արդար բողոքի և անխուսափելի յեղափոխական փորձերի պատասխանը եղան նորագոյն պատմութեան մէջ չտեսնուած ոճիրներ։ Հայի ձայնը խեղդուեց արեան գետերի մէջ. նա յայտարարուեց օրէնքից դուրս, որպէս զի զրկուի ամէն ինչից, ուժասպառ լինի սովից, այլանդակուի բարոյապէս, ոչնչանայ ստրկի նման, առանց ձայն հանելու։

Ահա այս պայմանների մէջ է, որ արձանանում է մեր առջև անխուսափելի հարցը՝ ո՞րն է արդեօք ելքը այդ դժոխային վիճակից, ինչո՞ւմն է կայանում մեր ազգային պարտաճանաչութիւնը։

Մենք դժուարանում ենք ենթադրել, որ բոլոր անցածդարձածից յետոյ, հայ հասարակութեան գիտակից խաւերի մէջ դեռ լինեն մարդիկ, որոնք անկեղծօրէն հաւատացած լինէին, թէ հայ ժողովուրդը կարող է գնալ հին ճանապարհով — վիզը ծռած, աչքերը երկինք ուղղած՝ հայցել թշնամու գութը, կամ թէ ձգտել ինքնավար կեանքի՝ օտարի միջոցով։

Բոլորն էլ՝ խոստովանւում են ներքուստ, որ թշնամուն վստահելը աններելի յանցանք է, որ Եւրոպան էլ երբէք ազգու կերպով չի միջամտի, մինչև որ հարկադրուած չլինի։ Շատ խրատական է այդ տեսակէտից ներկայ րոպէն. Եւրոպայի զանազան կենտրոններում Հայաստանի օգտին կատարուող ցոյցերը պիտի տա՞ն արդեօք մեր հարցին այն այժմէութիւնը, որ ունի այսօր մակեդոնական հարցը, շնորհիւ Բալկաններում տեղի ունեցած ապստամբական շարժումներին։

Եւ ինչո՞ւ Եւրոպան պիտի հոգ տանի հայերի մասին, երբ իրենք հայերը ձեռք չեն առնում ոչ մի լուրջ միջոց իրենց ազատութեան և նոյնիսկ ինքնապաշտպանութեան համար։

Բոլորն էլ, ըստ երևոյթին, համաձայն են, որ պէտք է „գործել" և այն՝ ազգային բազմակողմանի, հաւաքական ուժերով։

Ամէն մի հաւաքական մարմնի պահպանութեան համար գոյութիւն ունեն և համապատասխան օրգաններ։

Ընտանիքը պահպանուում է, որովհետև նրա մասին հոգ են տանում, նրանով պարում են ընտանիքի անդամների մի մասը, շատ անգամ զոհելով իրենց անհատականը։ Պետութիւնները կանգուն են մնում, որովհետև ամէն մէկը նրանցից ունի այս կամ այն ձևով կազմակերպուած վարչութիւն, ծառայողների ահագին բանակ, դիսցիպլինի ենթակայ զօրք, նիւթական ապահով միջոցներ։

Բայց ի՞նչ ձև է ունենալու մեր ազգային ընդհանուր շահերի պաշտպանութեան մարմինը, ինչպէ՞ս իմի գումարել հայ ժողովրդի ինքնապաշտպանութեան հաւաքական ուժը։

Տասնեակ տարիների ընթացքում հայ հասարակական շարժման նպատակը եղած է հայ ժողովրդի վերածնութիւնը՝ ինքնուրոյն կեանք վարելու և կուլտուրապէս առաջադիմելու համար։ Այդ նպատակը ոգևորել է հայ բանաստեղծին և ուսուցչին, ծերունի կրօնաւորին և վառվռուն երիտասարդին։ Ապահով կեանքի պահանջը, պատւի զգացումը գրգռել ու բողոքող են դարձրել նախ հայ պանդխտին, հողագործ գիւղացուն։

Հայ ժողովրդի վերածնութեան գաղափարը նպատակ է դրուած ազգի բոլոր հասունացած ու զգայուն խաւերի կողմից։

Ընդհանուր է նպատակը, ընդհանուր պիտի լինեն և այդ նպատակին հասցնող միջոցները։ Ընդհանուր դատի յաղթանակի համար անհրաժեշտ է ազգութեան այլևայլ տարրերի ներդաշնակ գործակցութիւն։

Անկարելի և անարդար է՝ շարժման պատասխանատուութեան ամբողջ ծանրութիւնը դցել ազգութեան այս կամ այն տարրի վրայ միայն։

Սարերում թափառող հայդուկը չէ կարող և՛ ժողովուրդ պաշտպանել և՛ ապրուստի հաց վաստակել, նա չէ կարող նոյնիսկ նպատակայարմար կերպով գործել, առանց ուրիշ տարրերի աջակցութեան, խորհուրդների։

Կուի դաշտից հեռու նստած արհեստաւորից ու վաճառականից անկարելի է պահանջել անպատճառ դէպի կռիւ վազել, բայց իրաւունք ունենք սպասելու, որ իր աշխատանքի մի շօշափելի մասը նա յատկացնէ ընդհանուր նպատակին։

Պարտքի գիտակցութեամբ տոգորուած երիտասարդից չենք կարող պահանջել անպատճառ կախաղան բարձրանալու քաջութիւն, բայց իրաւունք ունենք պահանջելու, որ նա գտնուի պատմական ր ո պ է ի բարձրութեան վրայ և չտարուի բարեգործական, կուլտուրական մանրմունր նպատակներով, չիջնի մինչև հասարակ ամբոխի աստիճան։

Ում շատ տրուած է, նրանից շատ էլ պահանջուում է։

Եւ որքան օրինակելի ու բարձր է մէկի պարտաճանաչութիւնը, այնքան խորն է նրա ազդեցութիւնը ուրիշների վրայ, այնքան հրամայողական է նրա իրաւասութիւնը դէպի ուրիշները։

Դժբախտաբար պիտի խոստովանենք, որ մենք դեռ ևս շատ հեռու ենք այլևայլ տարրերի զուգընթաց գործունէութիւնից։

Անհերքելի է, որ վաղեմի ժամանակներում հայ ազգի այսպէս կոչուած պաշտօնական ներկայացուցիչները — սահմանադրական ժողովներ, կաթողիկոսներ ու պատրիարքներ — երբեմնապէս բարձրացնում էին իրենց ձայնը յօգուտ ազգային գերագոյն շահերի, չնայած իրենց շատ փափուկ դիրքին։ Այդպիսով նրանք կատարում էին որոշ չափով իրենց պարտականութիւնը և դրանով վայելում միւս խաւերի երախտագիտութիւնը, ստանում իրաւասութիւն՝ պահանջել և միւսներից կատարել իրենց պարտականութիւնները։ Այսօր այդ պաշտօնական ներկայացուցիչները իրականապէս այլևս չկան. նրանք ստրուկն են կառավարութիւնների, խաղալիք պալատական պաշտօնեաների ձեռքում։ Առօրեայ անձնական շահերի երկրպագու՝ նրանք դարձել են վարձկաններ, մոռացել են ոչ միայն ազգային պարտաճանաչութիւն, այլև տարրական ազնուութիւն ու պատուասիրութիւն։ Գայլի բերանը տալով իրենց հօտը և կանգնելով նրա մօտ իբրև պաշտպան հովիւներ, նրանք դաւաճանում են ամենասուրբ սկզբունքներին և իրաւունք տալիս ամէն մէկին ասելու իրենց — „հեռո՛ւ ձեր տեղերից, հովի զգեստով գայլի գործակիցներ, մաքրեցէք ձեզնից մեր ազգայնութեան սուրբ տաճարը“...

Այլ գոյն ունի հասարակութեան համակրող տարրի ստուար մեծամասնութիւնը։ Եւ հայ արհեստաւորն ու հայ հարուստը և տգէտ գիւղացին ու համալսարանականը — բոլորն էլ զգում են ազգային պարտաճանաչութեան անհրաժեշտութիւնը, բայց... նայում են դրա վրայ ոչ լայն ժողովրդական, պատմական, այլ շատ նեղ, դասակարգային տեսակէտով։ Բոլորն էլ ընդունում են այդ պարտաճանաչութիւնը, բայց ընդունում են իբրև մի հասարակ, ազգօգուտ, մարդասիրական բան, ինչպէս բարի է, օրինակ, աղքատին օգնելը, ինչպէս լաւ է՝ մէկին կրթութիւն տալը, հիւանդանոց, եկեղեցի հիմնելը ևն։

Այդ ընդունուած նեղ տեսակէտի համեմատ էլ ամէն մէկը նպաստում է ազգային գործին։ Հետևանքը — բարոյապէս ոչինչ, նիւթապէս՝ կօպէկներ, որոնք աննկատելի կերպով կորչում են պահանջի անդունդի խորքերում։

Բայց դա չէ ազգային պարտաճանաչութեան գիտակցութիւնը։ Թոյլին ու հիւանդին օգնելը այնքան տարրական մի պարտք է, որ յատուկ է դարերից իվեր քրիստոնիայի հետ միասին և մահմէտականին ու կռապաշտին, որ գոյութիւն ունի նաև վայրենի բուշմէնների մէջ ու նոյնիսկ կենդանիների աշխարհում։

Նպաստել հայ ժողովրդի կրթութեան և առաջադիմութեան գործին՝ գրքեր տպագրել, դպրոցներ բանալ, զարգացնել արդիւնաբերութիւնը, համախմբել այլևայլ խաւերը իրենց շահերը պաշտպանելու համար — շատ կարևոր, շատ ազգօգուտ բաներ են, բայց... դա չէ օրեայ ազգային հրամայական պահանջը։

Այլևայլ նպատակ ու մասնակի շահ ունեցող ընկերութիւններ ճշմարիտ զարգացում կըստանան միմիայն խաղաղ ու նորմալ պայմաններում։

Պրօպագանդն էլ հայոց հարցի շուրջը այն ժամանակ միայն իսկական արժէք ունի, երբ չունի միմիայն ցուցական բնաւորութիւն, երբ զուգընթացաբար դրա հետ կատարւում են և կենդանի գործեր, երբ գրչի ու խօսքի հետ գործում են երկաթն ու արիւնը։

Այսօր մեր ազգային պատմական պայմանները այնպէս են դասաւորուած, որ սեղանի վրայ դրուած է ինքնուրոյն, նորմալ կեանքի և նոյնիսկ գոյութեան խնդիր և այդ բացառիկ լուրջ պայմաններում մասնակի նպատակները պէտք է յետ քաշուեն, պիտի խաղան երկրորդական դեր։

Աղքատին չոր հացի կտոր տուող գիւղացին, պիտի բաց անէ իր կիսադատարկ ամբարը տառապող ժողովրդին օգնելու համար։ Հիւանդանոցի վրայ հաղարներ ծախսող վաճառականը տասնեակ հազարներ պիտի յատկացնէ հայ ազգայնութեան խնդրի պաշտպանութեան համար։ Գիտակցութիւն ունեցող և քաղաքական ագիտացիայով պարապող ինտելիգենտը իր ուժերի ու միջոցների մեծ մասը պիտի ծախսէ զինուորական խմբեր կազմակերպելու, յեղափոխական ձեռնարկներ իրականացնելու վրայ։

Վերջապէս բոլոր զգայուն ու հասունացած հայերը նիւթապէս աջակցելու հետ միասին՝ անձամբ պիտի գան ստուարացնելու այն բանակը, որի վրայ դրուած է գործի ամբողջ ծանրութիւնը։

Պատմական հոսանքը բերել է մեզ այսօրեայ դրութեան, երբ հայ ազգայնութեան խնդիրը կանգնած է մեր առջև, իբրև մեր անցեալի և ապագայի մարմնացումի Աստուած։

Ազգային պարտաճանաչութիւնը և քաղաքացիական տակտը պահանջում է բոլորից խոնարհուել այդ Աստծու առաջ, հպատակուել նրա պահանջներին։

ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ՌԷՖՕՐՄՆԵՐԸ

Բախտը սկսում է ժպտալ Բալկանների նահատակ ժողովրդին։ Եւրօպան միջամտեց, յեղափոխական փոթորիկներից դրդուած։ Շատ ոգևորուելու տեղիք չունենք այդ միջամտութեան առթիւ. բայց թւում է թէ մի քայլ արուած է դէպի ռէֆօրմները։ Ռուս-աւստրիական ծրագիրը, որքան էլ խեղճ լինի իր բովանդակութեամբ, այնուամենայնիւ ներկայ հանգամանքներում նա մի գրաւական է, որ թիւրքական սարսափները չեն կարող այլևս երկար շարունակուել Մակեդոնիայում։

Այդ համեստ ծրագրի էական կէտերն են.

1) Նշանակել Սալոնիկ, Կոսովօ և Մոնաստիր վիլայէթների համար մի ընդհանուր վերահսկող մի քանի տարով, որի պաշտօնը պիտի լինի հսկել հանրային խաղաղութեան վրայ։ Որոշած ժամանակը լրանալուց առաջ նա չէ կարող հրաժարուել առանց պետութիւնների համաձայնութեան։ Վալիները ճշգրիտ կերպով պիտի կատարեն նրա հրահանգները։

2) Ոստիկանութիւնը և ժանդարմերիան պիտի վերակազմուին եւրոպական մասնագէտների ղեկավարութեամբ։ Ժանդարմերիան պիտի բաղկանայ քրիստոնեաներից ու մահմէտականներից՝ իւրաքանչիւր մի վայրում համաձայն ամէն մի ազգաբնակութեան թուի։

3) Այն բոլոր տեղերում, ուր ազգաբնակութեան մեծամասնութիւնը քրիստոնեայ է, հանդապահները պիտի լինեն քրիստոնեայ, որպէս զի վերջ դրուի վայրենի արնաւուտների արշաւանքներին ու ոճիրներին։

4) Ազատ արձակել երեք վիլայէթներում վերջին խռովութիւնների պատճառով բանտարկուածներին։

Տեղական հաստատութիւնների կանոնաւոր պաշտօնավարութիւնը ապահովելու համար՝ եկամտի և ծախսի բիւջէն պիտի կազմի իւրաքանչիւր վիլայէթում, և գաւառական գանձումները պիտի սահմանուին գլխաւորապէս տեղական վարչութեան պէտքերի համար։

Ծրագիրը շատ խեղճ է, ինչպէս տեսնում ենք. դրանով էլ բացատրւում է այն փութկոտութիւնը, որով Բ. Դուռը ընդունեց նրան։ Սակայն իբրև սկզբնաւորութիւն, այդքանն էլ մի բան է. այդ սոսկ վարչական բարեփոխումները ևս զգալի թեթևութիւն կարող էին բերել Մակեդոնիայի դժբախտ ժողովրդին, եթէ անյապաղ իրագործուէին։

Եւրոպական կոնտրոլի մասին խօսք չկայ ծրագրի մէջ։ Սուլթանն է նշանակում ընդհանուր վերահսկողին. այդ է ծրագրի ամենամեծ թուլութիւնը։

Մենք այնուամենայնիւ դժուարանում ենք հաւատալ, որ Մակեդոնիան վերստին մատնուի սուլթանական կամայականութիւններին և որ Եըլդըզը միանգամ ևս առիթ ունենայ հեգնել Եւրոպային և ոտի տակ տալ նաև այդ վերջին յիշատակագիրը, որին բացարձակ հաւանութիւն են տուել մնացած չորս խոշոր պետութիւնները ևս։ Դժուարանում ենք հաւատալ մանաւանդ այն պատճառով, որ խռովութիւնները շարունակւում են Բալկաններում, որ մակեդոնական կոմիտէները՝ խորապէս դժգոհ մինիմալ ծրագրից՝ կրկին պարզել են ապստամբութեան դրօշը, որ Մակեդոնիայի „ներքին կազմակերպութիւնը“, որին վերջերս օգնութեան հասաւ իր ստւար խմբերով Բօրիս Սարաֆօվ՝ որոշած է փչել ընդհանուր ապստամբութեան հրդեհը, որը կարող է տակն ու վրայ անել և՛ Բալկանեան երկիրները և՛ միջազգային խաղաղութիւնը... Այո, մենք միանգամայն դժուարանում ենք հաւատալ, որքան էլ տխուր ու վհատեցուցիչ լինեն անցեալի փորձերը. ծրագրուած ռէֆորմները պիտի իրագործուին կամ թէ հրդեհը պիտի բորբոքի, լուսաւորելով ընդարձակ հորիզոններ։ Մօտ է Մակեդոնիայի ազատութիւնը և նա կը պարտի այն՝ իր անվեհեր զաւակների արիութեան ու տոկունութեան։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿՆԵՐ ԷՐԶՐՈՒՄԷՆ

I

1 դեկտեմբեր, 1902

Ցանցաւոր է լինում մարդ, երբ գողանում, սպանում, կողոպտում է իր նմաններին։ Անթիւ ու անհամար են յանցանքները և ամէն մի քաղաքակիրթ թէ վայրենի հասարակութեան մէջ այդ յանցանքների համար զանազան պատիժներ են որոշած՝ բանտարկել, գլխատել, կախաղան բարձրացնել և լն։ Բայց ասացէք խնդրեմ, ո՞ր ազգի մէջ, ո՞ր օրինագրքի ո՞ր էջում պատիժներ են սահմանած այն մարդուն, այն խեղճ ու օրական հացին կարօտ գիւղացուն, որը իր տան ապրուստը հոգալու համար, իբրև հաւատարիմ հպատակ՝ իր կառավարութեան հարկերը վճարելու համար, իր պարտատէր թիւրք աղայի կամ քիւրդ բէգի պարտքը տալու և իր կինն ու որդիները, իր տունն ու արտերը գրաւելուց ազատելու համար՝ թողնում է ամէն բան ու պանդխտութեան է դիմում օտար երկիր, մի քանի ղուրուշ սև փող աշխատելու, հազար ու մի զրկանքներ կրելով և դառն տանջանքների ենթարկելով իր անձը...

Ո՞ր օրէնքի տրամադրութեամբ է պատժւում այն մարդը, որ գնդակի ու սուրի հարուածներից խաղաղասիրութեամբ փախչելով, պահպանում է իր անձի գոյութիւնը օտար երկիր դիմելով՝ առանց մաքառելու իր հալածիչների դէմ, առանց վրէժխնդրութեան փոքրիկ ցոյց մի անելու և խաղաղութեան ժամանակ կամենում է վերադառնալ իր սիրելիների գիրկը, բռնելու օրհնած արօրի մաճից, որ երկրագործի և կեանքն է և փառքը...

Ահա թէ որպիսի մարդկանց է պատժում թիւրք կառավարութիւնը, երբ այլևս մարդ չի գտնում պատժելու։ Տասնևիններորդ դարու վերջին տասնեակը, որ արիւնով ողողեց Հայաստանը ծայրէ-ծայր, որ որբերի և այրիների մի աշխարհ դարձրեց մի ժամանակ այնքան ծաղկած ու շէն երկիրը, ստիպեց ժողովրդի մի ահագին մասը վտարուել հայրենական տնից, պապենական այգուց ու արտից—անէծքով կը յիշուի հայ սերունդների մէջ։ Այդ անիծեալ օրերին ճողոպրած հայ տարրն էր, որ այս աշնան ռուս-թրքական սահմանագլխում լալագին աչքով աղերսում էր սուլթանին՝ շնորհ անել ընդունել զինք իր հայրենի տան մոխրակոյտի վրայ թառած ողբերգու բուերի շարքում և թոյլ տալ պաշտպանելու իր մերկ կինն ու քաղցածութիւնից ուրուական դարձած որդիները. բայց ապարդիւն։ Ոչ ոք լսեց այն հազարաւոր հառաչները, որ Արարատի քամին Կարսի սահմանից կը քշէր դէպի նրանց ողբալի ծննդավայրը։

Այդ ողորմելի թափառականներից նրանք, որոնք չկարողացան տոկալ հայրենիք և ընտանիք տեսնելու բուռն ցանկութեանը, մարդկային ամենասուրբ այդ զգացումին՝ խոյս տուին թշուառութեան բովից և անցան սահմանը՝ մահն ու բանտարկութիւնը աչքերնին առած։ Ամերիկայի վայրենիներն ու Աֆրիկայի մարդակերները պիտի զարմանան, երբ լսեն, թէ այդ աշնիւ, հլու և ընտանեկարօտ մարդիկը իրենց տներից քաշկռտելով, բանտերի մութ խորշերը նետուեցան... Տեսան նրանք այնտեղ իրենց ընկերներից շատերի մահը՝ քաղցից, ցրտից և մտատանջութիւնից հիւծուած ու հիւանդացած

Ճշմարիտ է որ սուլթանը իվերջոյ ընդհանուր փախըստականներին ներումն շնորհեց հոկտեմբեր ամսի վերջերում, բայց այդ ներումը կեանք չտուեց մեռեալներին, իսկ կենդանիների շրթունքներին ժպիտ չեկաւ, որովհետեւ նրանք բանտում կերան իրենց աշխատած մի քանի սեւ փողը եւ բանտից դուրս գալով, առանց տոկալ կարողանալու իրենց ընտանեաց թշուառութեան, այսօր նորից ստիպուած են պանդխտել։

Երբ մարդ կը շրջի բանտերում, զայրոյթով կայրուի, տեսնելով որ քիւրդ աւազակի ու մարդասպանի հետ կողք կողքի դրուած են այնտեղ հայ արհեստաւորը կամ երկրագործը, վարուցանք անելու փափագով հայրենիք փախած աշխատաւորը...

II

5 դեկտեմբեր

Այն օրից, երբ հայկական խնդիրը դրուեցաւ դիւանագիտութեան սեղանի առջեւ եւ եւրոպացիք տրամադրութիւն ցոյց տուին բարենորոգմանց ծրագրի խնդիր յարուցանել Եըլդըզում, այն օրից քաղաքականութեան մի տարբեր հոսանք մտաւ Տաճկաստանի մէջ։

Երկրի հայ ազգաբնակութեան մեծ գերակշռութիւնը միւսիւլման ժողովրդին եւ Թիւրք կառավարութեանը հաւանական ցցուց հայկական խնդրի բարեյաջող լուծումը։ Ընդհանուր սարսափը ստիպեց տաճիկ ժողովրդեան իր շուրջը նայել եւ ի՞նչ տեսաւ—հայը թւով գերազանցում է իրենցից շատ նահանգներում. հայը ամէն տեղ նստակեաց ժողովուրդ է։ Երկրագործութիւնը, վաճառականութիւնը, արհեստը, արուեստը, ճարտարապետութիւնը եւ կառավարչական բոլոր պաշտօնները հայի ձեռքն են, եւ հէնց այդ պատճառով էլ հարուստը, ուժեղը, համարձակը եւ գրեթէ-փշխող տարրը հայն է։ Իսկ ի՞նչ են իրենք. եկւոր մի ժողովուրդ, որ դեռ կանոնաւոր հիմք չէ դրած երկրի մէջ այնքան երկար ժամանակամիջոցում։ Կառավարութիւնը իր սուլթանաթովը հպարտացած, իսկ ժողովուրդը տիրող տարրը լինելով՝ կենցաղասիրական հաճոյքների մէջ թաղուած, կանանց եւ երեխաների գրկում՝ ծծելով են զբաղուած Մահմէտի արքայութեան կաթ ու մեղր բղխող ծաղկի հիւթը։ Մինչ իրենք այդպէս վավաշոտութեամբ եւ ջլայտութեամբ յղփացած՝ մեղկացրել են իրենց մի ժամանակ իբրեւ դիւցազուն երեւան եկող ազգը, մինչ քաղցր երազների ծոցում այս կեանքից էլ աւելի քաղցր կեանք անցնելու կամուրջը նամազների տարափով ամրացնելու ետեւէ էին, „գիավուր իթողիթը" առիթից օգտուելով գրաւել է ասպարէզը, իսկական տէր է դառել երկրին, արհեստին, առեւտուրին, պաշտօններին եւ հարստութեան, մինչ ինքը միայն խոհանոց մը ունի եւ կանանոց եւ ուրիշ ոչինչ։

Վիճակի այս մերկացումը սթափեցրեց Մուհամէտի ճուտերին, եւ եղաւ այն, ինչ որ տեսանք, այսինքն ընդհանուր կոտորածներով նրանք պահպանեցին Թւերի հաւասարակշռութիւնը եւ կոտորուողների, մեռեալների, փախչողների ու գաղթողների, չամուսնացողների ու չբերողների պատճառով մինչեւ իսկ գերակշռող տարր դարձան առայժմ։

Թալանի սիստէմով գրաւեցին տնական ինչքերը, խանութների ապրանքներն ու փողերը. կողոպուտը այնքան աղքատացրեց հայերին, որ այսօր ոչ ոք կը ճանաչէ նրանց, թէ մի ժամանակ տէր էին։ Քիւրդ ու Թիւրք հրոսակների դաշտային կռիշաւանքները աւերեցին գիւղացու տունը, խախտեցին երկրագործ ժողովրդի գոյութեան հիմքերը, խլեցին նրա վերջին եզը ու ստիպելով նրանց գաղթել ուրիշ տեղեր, նրանց տեղերը լցրին քիւրդ, չէրքէզ, թիւրք ու թիւրքմէններով։ Քաղաքացի հարուստների անշարժ ընդարձակ կալուածներն աւերուեցան եւ անպտուղ մնալով՝ գնուեցին գնի մի քսաներորդ մասով. 2 հազար լիրայի կալուածքը 3-4 հարիւր լիրայով գնուեցան թիւրք ունեւորներից։ Աղքատացնելով հայերին եւ գրաւելով նրանց ինչքը, անգործութեան ենթարկեցին նրանց եւ ապա գործի մէջ հրաւիրելով, առաջարկեցին գործել՝ փողը թիւրքից գործը հայից. խեղճ հայը իր փողերի տիրոջ հետ ընկերացած, գործն եւս նրան սորվեցնելու յօժարեցաւ եւ դէպի դրսացի Ռուսաստանն ու Եւրոպա առեւտրական ամէն գործ բռնելով, մօնկօլի այդ տգէտ թոռները դարձան երկրի առեւտրական տարր եւ մի քանի տարի յետոյ շուն գեավուրից ձանձրացած, անկախ տէր եղան եւ նրանց փողին եւ նրանց գործին։ Արդի՞ւնքը։ Այժմ որ երկրեւբաւական անդորր եւ խաղաղ ժամանակն է, եւ ջուրը կարծես նորից իր առուն է ընկել, այժմ հայի համար ոչ մի յաջողութիւն չկայ երկրի մէջ. այժմ անգործը, քաղցածը եւ աղքատը հայն է։ Չթողնելով նրան անցնել երկրից դուրս, չթողնելով նրան հիմնական մի գործ բռնել երկրի ներս, այսինքն հանդեր, հողեր մշակել, անասնաբուծութիւն անել, այժմ հային են դարձրել անհիմն եւ շարժուն մի տարր, որը բաժին չունենալով երկրից, չունի գէթ ոչ կանանոց եւ ոչ խոհանոց։

Օձային խորամանկութեամբ առաջ տարուած տեղափոխութեան այս սիստէմը ժողովրդին դրել է այն դրութեան մէջ, իբր թէ լճի սառած երեսի վրան խփած վարդիկ, որ մի փոքր ջերմութեամբ կարող են կորստեան մատնուել։

Տնտեսական այս սարսափելի դրութիւնը եթէ չբարեփոխուի, մօտ ժամանակում յուսահատ հայը ոչ միայն իր հայ լինելուց, այլ իր մարդ լինելուցն իսկ պիտի ձանձրանայ եւ պիտի նախանձի Տաճկաստանի փողոցներում ման եկող շներին, որոնք գէթ մի փոքր համակրութիւն են վայելում թիւրքերից։

* * *

Այս ամառ Մշոյ եւ Խնուսի կողմերում համիդիէ քիւրդերու մէջ յարուցեալ կռիւները պարզեցին մի քանի երեւոյթներ։ Քրդերի բնակութեան մօտերքում կամ նրանց հետ ապրող հայերը դարձել են պաշտպանեալ իրենց մօտի քիւրդ աղայից, եւ ցեղական կռիւներին մասնակցել են քրդերի բաժանուած հրացաններով։ Եւ ամէն մի կռւում, ուր եղել են հայ կռւողներ, հակառակ կուսակցութիւնը մեծ կորուստներ է կրել։ Այդ պատճառով գանգատներ են տեղացել կառավարութեանը որ „մեր թշնամիք միշտ յաղթել են մեզնից. այժմ հայ ֆէդայիներ պահելով իրենց մէջ, յաջողեցին մեզ յաղթել եւ շատ մարդիկ կոտորել"։

Հայը քիւրդի լաւագոյն ընկերը կարող է լինել, այդ երկու ազգերը եթէ համաձայնէին՝ աւելի ուժեղ տարր կը հանդիսանան, քան ամբողջ թիւրքութիւնը։

ՆԱՄԱԿ ՄՈՒՇԷՆ

16 Հոկտեմբեր, 1902

Անցեալ անգամ գրած էի որ ամառը Մշոյ դաշտի համար անցաւ առանց մեծ տագնապի և առանց ծայրայեղ բարբարոսութիւնների։

Բայց Հայաստանի ամէն անկիւն Մշոյ դաշտը չէ։

Այս բանը ապացուցանելու համար հարկ չկայ շատ եռունները երթալ. կան խաւարակուռ անկիւներ, ուր գտնուած հայութիւնը անլուր տառապանքներու տակ կը տուայտի, կը սպառի, ենթարկուելով հրէշային կամայականութիւններու և բռնաբարութիւններու։

Վերցնենք ասոնցմէ ամէնէն մերձաւորները։ Օրինակի համար Պերմ հայաբնակ գիւղը, որ կը գտնուի Սասնոյ հարաւային կողմը 4 ժամ հեռաւորութեամբ, Խիանայ գաւառի մէջ, Փասուրի գայմագամութեան ներքոյ։ Պերմ այժմ ունի 60 տուն հայ, երկու եկեղեցի և մէկ վարժարան (վերջերս փակուած)։ Տասը տարի առաջ Պերմ հարիւր տնէն աւելի հայ ունէր, բայց իրենց վրայ ծանրացած տարապայման բռնութեանց չկրնալով դիմանալ ու դիմադրել՝ բնակիչները հետզհետէ ցրուած, հեռացած են իրենց պապենական օճախէն։ Նոյնը կը նկատուի և հետևեալ մերձակայ հայ գիւղերուն մէջ. Բացի՝ այժմ ունի 10 տուն հայ, տասը տարի առաջ ունէր 30 տուն։ Արխունթ՝ 30 տուն, առաջ ունէր 50 տուն. Փարկա՝ 30 տուն, առաջ ունէր 150. Սաղտուն՝ 20 տուն, 50-ի տեղ. Հեղին՝ մնացեր է միայն 2 տուն, առաջ 30 տունէ աւելի ունի եղեր. Արտկունք՝ մնացեր է 10 տուն, առաջ ունէր 40 տուն, և այն և այն։

Այս բոլոր հայաշատ գիւղերու հետզհետէ դատարկուելուն և ժողովրդեան գաղթելու կամ ոչնչանալու պատճառ եղած է Քէօր Սըլօ անուն քիւրդ մը, Խիանցի Քէլէշ աղայի տունէն։ Այս Քէօրը, որ Խիանցի աշիրէթի գլուխն է, պատուհաս մըն է դարձած տեղական հանդարտ և աշխատասէր հայութեան գլխին։ Չկայ չարիք որ հասուցած չըլլայ, իր անամօթ մարդիկներու և իր բազմաթիւ հրացանակիրներու վրայ կոթնած։ Աներկիւղ, անարգել կը բռնանայ հայ ժողովրդի վրայ։ Ցզրուկի պէս կպչած անոնց մարմնին, անկուշտ կը ծծէ անոնց արեան վերջին կաթիլը։

Թիւրք կառավարութիւնը փոխանակ մանձահարելու այս բարբարոս քիւրդ ցեղապետի վայրագութիւնները և չափ մը դնելու անոր արշաւանքներուն, նկատելով զանի իբրև ամենայարմար գործիք մը իր դժոխային ծրագիրներուն՝ հայութիւնը բնաջնջելու մէջ՝ ամէն կերպով քաջալերած է զայն և անպատիժ թողած իր բոլոր գործած չարիքներուն մէջ։ Եւ նոյնիսկ աւելի խրախուսելու համար զանի, տուած է անոր պաշտօնական դիրք մը, յանձնելով անոր Խիան գաւառակի միւտիրութիւնը։ Այս պաշտօնը թէև աննշան թիւրք վարչութեան մէջ, բայց Քէօր Սըլօյի Ցկատմամբ ունի ամենամեծ նշանակութիւն. իրմէ մեծ պաշտօնեաներ, իր գլխաւորները՝ Փասուրի գայմագամը և Կէնճի միւթէսէրիֆ փաշան, գործիքներ են անոր ձեռքին մէջ, հլու հպատակներ, ազդելով և հրապուրելով անոր հրացանակիրներէն և ոսկիներէն։

Քսան տարիէն աւելի է, որ այս արիւնկալ քիւրդը, թէ վերը նշանակուած և թէ Խիանքի ու Խարզանքի մէջ գտնուող ուրիշ շատ մը հայ գիւղերու տէրն և բռնապետն է. իրեն են այդ բոլոր հայերու ունեցած-չունեցածը՝ ոչխարը, այծերը, ձիերը և այն։

Եթէ փորձենք անոր քսան տարուան մէջ ըրած հարստահարութեանց և բռնաբարութեանց մանրամասն հաշիւ ներկայացնել, պէտք պիտի ըլլար հատորներ կազմել, բայց ատի գլուխ հանելու համար ոչ ժամանակ և ոչ ալ միջոց ունինք։ Ինչպէս ըսինք վերև, հայերը ա՛լ անկարող դիմադրել Քէօր Սըլօյի հարստահարութեանց ու սպառնալիքներուն, հետզհետէ դարձեր են անոր գերիներ։ Աւելի ևս. ծանր բռնութեան տակ մէկ մասը ընդունած է մահմէտականութիւն,—ծանր հանգամանք, որի համար սակայն չենք կարող մեղադրել այդ խստութիւններու մէջ կորսուած հայութիւնը, քանի որ անոնց մէջ մուտք չէ գործած ինքնապաշտպանութեան և ինքնագիտակցութեան սրբազան գաղափարը, քանի որ նրանք աղքատութեան պատճառով անկարող են զէնք գնել։

Պերմցոց համբերութիւնը ալ հատած, դիմադրելու ալ անկարող՝ վերջերս որոշեցին գաղթել խմբովին, եթէ երբէք իրենց բողոքը չլսի կառավարութիւնը։

Ահա քիւրդ Սըլօյի գործած սխրագործութեանց հաւաստագրութիւնը, որ հասցրեր է տեղիս ազգաբնակութիւնը վերը նկարագրուած վիճակին։

1) Հազիւ գարնան դռները կը բացուին և հայը կը պատրաստուի իր գարնան վար ու ցանքսի, երբ վրայ կը հասնին Քէօրի խոլամները (ծառաները), և կը տանին հայերու մեծ ու փոքրին դէպի Քէօրի ընդարձակ կալուածները։ Հայը պէտք է նախ աղայի վարուցանքս ընէ, յետոյ անոր բազմաթիւ բարեկամներու, ազգականներու և խոլամներու, և անկէ վերջ միայն հայը իրաւունք ունի իրեն համար աշխատելու։ Հայն է որ քիւրդերի վարուցանքսն ընելէ յետոյ, պէտք է ջրէ արտերը, հերկէ, մաքրէ և գոյացած ցորեն կամ ուրիշ հացահատիկներ տանի քիւրդի ամբարները։

2) Հայերը պարտաւոր են Քէօրի անհամար ոչխարտաւարի համար խոտ քաղել, չորցնել, տերև կտրել, չորցնել և դիզել։ Քէօր Սըլօն ամէն տարի, ձմեռը, իր ոչխարների մեծ մասը կը յանձնէ հայերուն պահելու, եթէ մէկ ոչխար սատկի, պէտք է հայը վճարէ, այն ալ հնտրծուրի, այսինքն Քէօրի ուզածը պիտի տայ հայը։

3) Պերմցի հայերը չունին եզ իրենց հողերը մշակելու և կամ ցորեն ծեծելու համար, այդ պատճառով կերթան դրացի գիւղերու քրդերէն վարձքով կը բերեն եզներ, բայց աղայի մարդիկ շուտով վրայ կը հասնին և այդ եզներ գործածել կուտան աղայի պիտոյքներուն։

4) Ամէն ծնած որձ գառ կը պատկանի աղային. պէտք է մորթի, երբ աղան գիւղ այցելէ և կամ տարուի անոր քէօշկը։ Անոնք որ որձ գառ չունին, պիտի գնեն ուրիշներէն աղային տանելու համար։

5) Գիւղերու տասանորդը Քէօրը կը վերցնէ կառավարութենէն, և ժողովրդէն կը գանձէ ոչ թէ օրինական ձևով այլ իսկապէս արդիւնքի մէկ երրորդը։

6) Դարձեալ ինքն է որ կը գանձէ արքունի տուրքերը, որոց չափ ու սահման չկայ և կախուած են աղայի քմահաճոյքէն։ Այս գումարներ կը սեփականէ ինքը, մաս մը միայն յանձնելով կառավարութեան, ան ալ կը հաշուէ իր հսկողութեան վարձքի փոխարէն, որով ժողովուրդը միշտ պարտք կը մնայ կառավարութեան. հարիւր հազար ղուրուշ պակրիա ունի։

7) Եթէ հայը աղջիկ մը կարգէ, պարտաւոր է աղային

վճարել Արուսիցէ անունով տուրք մը, 60-100 ղուրուշ։

8) Հայերը մի քիչ դրամ՝ վաստկելու համար կերթան պանդխտել Հալէպ, Այնթափ և շրջականները։ Պանդխտութենէն վերադարձող ամէն հայ պարտաւոր է վճարել աղային 100-200 ղրշ., եթէ նոյնիսկ վերադարձողը ղուրուշ մը իսկ շահած չ՚ըլլայ։

9) Հայեր իրաւունք չունին ոևէ բանի մը համար դիմում ընելու գայմագամին կամ միւթէսէրիֆին։ Պէտք է ամէն դատ, ամէն խնդիր աղային ներկայացնի, այս հրամանին անսաստողներ՝ կը պատժուին խստօրէն։

10) Վերև նշանակուած տուրքերէն, հարկերէն, նուէրներէն և տարապարտուց աշխատանքներէն զատ, դարձեալ հայերը պարտաւոր են տարեկան որոշ չափով աղային բան տալու իրենց բոլոր արտադրութիւններէն՝ հացահատիկներ, մազ, բուրդ ևն ևն։ Զենք ուզեր այլևս հոս այս հարստահարութեանց վրայ աւելացնել նաև այն բոլոր անբարոյականութիւնները, թալանները, սպանութիւնները, առևանգումները, զորս աղան և անոր մարդիկ անխիղճօրէն կը գործադրեն։ Հերիք է մեր մերկութիւնը պարզենք. արար աշխարհէ ալ կ՚ամչնանք։

Ահա այս պայմանների տակ կապրին Պերմի և շրջակայ գիւղօրէից հայերը։ Որովհետև Քէօր Սըլօն վերջերս մասնաւոր հակառակութիւն ունենալով պերմցոց դէմ, աւելի կրկնապատկած էր իր բռնաբարութիւնները և հարստահարութիւնները — պերմցոց անկարելի էր մնալ այլևս իրենց տեղեր և անոնք կ՚որոշեն գաղթել տնով, տեղով։ Աղան իմանալով պերմցոց այս խորհուրդը, անմիջապէս քրդերը կը լեցնէ գիւղը, կը պաշարէ, ճամբաները կը փակէ և չի թողուր որ հեռանան։

Օգոստոսին, 25-ի չափ պերմցի հայեր կը յաջողին աղայի մարդոց հսկողութիւնը պարապ հանել և փախչիլ։ Ասոնք եկեր են Մուշ, ինչպէս իմացանք, հեռագիր զարնելու պալատ և պատրիարքարան, անորոշ վիճակի և մանաւանդ աղայի զայրոյթին մատնելով իրենց ընտանիքները։

Սակայն պերմցիք վախնալով աւելի մեծ փորձանքի մը հանդիպելէ՝ յուսահատ Մուշէն վերադարձան իրենց տեղը. ոչ առաջնորդարան և ոչ կառավարութիւն մտիկ չեն ըրած զանոնք, չեն լսած իրենց բողոքը։

Ահա թրքական կեանքի և արդարութեան մէկ փոքրիկ նմուշը։

ՆԱՄԱԿ ՏՐԱՊԻԶՕՆԷՆ

13 դեկտեմբեր 1902

Հոս ալ ճնշումը և հալածանքը իր ծայրայեղութեան հասած է, յետնեալ զինուորական տուրքերը դիզուած մէկզմէկու վրայ ահռելի ժանտութեամբ մը կախ ինկած է ժողովրդի գլխին։ Գանձումները կ՚ըլլան ամենավայրագ ու անգութ միջոցներով։ Տեծերու ու տանջանքներու տակ աղեկտուր վայնասունք երկինք կը դղրդացնեն։ Կը ծախեն գիւղացի հայի ապրուստի վերաբերեալ ամէն ինչը, մինչև որ լրացնեն պահանջին ու երբ պակաս մնայ՝ չարչարանքներու սաստկութեամբ կըստիպեն ամբողջացնել։ Ժամանակ մը որ ասոնք կ՚ըլլար հեռու խուլ անկիւններ և որոնք շատ անգամ անլսելի կը մնային, այժմ կ՚ըլլան հաւասարապէս ամէն կողմ, նոյնիսկ քաղաքէս կէս ժամ հեռու գիւղերը, 7-8 հիւպատոսներու քթին տակ և որոնց վրայ կարծես այս սրտաճմլիկ հառաչանքները և աղեկտուր հեծկլտոցը երեկոյթի մը ուրախ տպաւորութիւնը կ՚ընէ։

Քաղաքիս մէջ հայ մուխթարը հետը 5-6 տաճիկ թահսիլտարներ, կը բռնեն հանդիպած հայուն օձիքէն ու եթէ իրենց պահանջած ստակը չկրցաւ ճարել ու տալ՝ նոյն պահուն քաշնիքաշ կը նետեն բանտը, ուր կ՚իյնայ հոգեկան սաստիկ տանջանքներու մէջ, յիշելով տան սիրելեաց քաղցն ու մերկութիւնը այս ցուրտ ու բուքին։

Աղ յուսահատ կ՚ապրի հայը, զրկուած է ան ամէն իրաւունքէն, զրկուած է նաև մխիթարող յոյսերէ, չունի ան կեանքի ապահովութիւն, սառած է հոգիով ու մարմնով։ Իր օրապահիկը ճարելու անկարող վիճակին մէջ լուռ կծկուած մութ անկիւն մը, վախկոտ աչքերը հողին գամած՝ կ՚ողբայ իր կորուստը օրհասական այս ճգնաժամին մէջ։

Մօտ է ռեմզան պայրամին, ու մօտ նաև ծնունդը. տաճիկ պաշտօնեաներու ամսականները կէս մը ապահովուած է շնորհիւ հային։ Ամէն կողմ ցնծում, ոգևորութիւն. փողոցները կեանքը եռ ու զեռ կուգայ երկսեռ բազմութեամբ, ստակի խշըրտոցները, խօսակցութեանց աղմուկը կեանքը կը պատկերացնեն։ Կեանք կայ հրապարակի վրայ, կեանք կայ ամէն կողմ, ամէն տուն, բացի հայու տունէն. հոն մեռելութիւն կայ, հոն զզլանք կայ դէպի կեանքը, դէպի մարդը, հոն հոգևարքի վերջին մռընչտուքներ կը լսին. ահաւոր լռութիւնը կը տիրէ հոն, ու երբ տան պզտիկը իր դալուկ դէմքով երբեմն կուգայ խռովելու խորհրդաւոր այս լռութիւնը ըսելով. — Հայրիկ նոր տարին մօտ է, ինծի պէպէկ պիտի առնես. — հօր պատասխանը կ՚ըլլայ զոյգ մը արցունք այտերն ի վար. — Աղջիկս... մուխթարը, թահսիլտարները կը ճանչնաս...

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ

Պետերբուրգ 21 յունուար, 1903

Ճամբորդի աչքերը ուղղած են դէպի Մասիս, դէպի վեհապանծ, գեղանի լեռան բարձր գագաթը։

— Հրէ՛ն է...

Եւ նա դարձնում է աչքերը դէպի ներքև, նայում դէպի առաջ, ուր, հեռաւորութեան աղօտի մէջ, նկարուած են սրածայր գմբէթներ, կարծէք օդի մէջ հապտատուած։

Եւ գեղջուկը խաչակնքում է երեսը։

Մասիսի դարևոր ընկերն է դա, Էջմիածինը։ Հին հին դարերի ժառանգ, արիւնով և կրակով շաղախուած մի հնութիւն, որ հաւատացեալ հօտին այնքա՜ն դժբախտութեան հետ միասին՝ կրօնական պայքարի այնպիսի՜ խորունկ ուժ ներշնչեց, մնաց դիմացկուն, համբերատար բիւրաւոր փոթորիկների դիմաց, յաճախ անզգայ՝ ինչպէս ձիւնապատ կատարը հարևան հսկայի...

Տասնուհինգ դարու պատմութիւն կայ այդ աղքատ „քրիստոնեայ“ գիւղերի, այդ վանքապատ վայրերի շուրջը։ Ահա աւերակներ, ուր, թերևս, հեթանոս Հայաստանը ողբաց իր կործանումը՝ ընկած նորաբողբոջ, բայց մոլեգին վարդապետութեան հարուածներից։ Ահա վանքեր, ուր մանուկ քրիստոնէութեան կրակով բռնուած օրիորդներ՝

Ղողակաթ, Հռիփսիմէ՝ իրենց անձը դրեցին նրա սեղանի վրայ։ Ահա մի ցեխոտ, աղքատ, գիւղ — Վաղարշապատ է դրա անունը,—որ երբեմն հայկական անկախ թագաւորութեան մայրաքաղաքն էր։ Ահա քեզ հեռու, ինքը այն տաճարը, ուր նորադարձ հօտի բորբոքուած երևակայութիւնը հեղինակեց Միածնի Էջը, կանգուն արձանը այն տխուր պատմութեան, որ կոչւում է քրիստոնէութեան պայքար մահմէտականութեան դէմ...

Որքան զարհուրելի, որքան կսկծալի էր այդ պայքարը։ Դարեր շարունակւեց նա, դարերի պատմութիւն կազմեց, դարեր լեցրեց իր արիւնով ու սոսկումներով, իր ախերով ու ողբով։ Եւ երբ, 19-րդ դարի սկզբին, սկսւեց վրիժառու հսկայական կռիւը՝ չափազանց առաջացած մահմէտականութեան դէմ, մի կռիւ, որի առաջապահները կանգնած էին մի կողմից յունական կղզիների վրայ և միւս կողմից կովկասեան լեռների սահմաններում, բազմատանջ հայկական եկեղեցին, գլուխ առած իր կենտրոնը — Էջմիածինը — նետւեց այդ կռւի մէջ։ Եւ այն օրերին, ռուսական զօրքը՝ իբր դրօշակիր ռուս ժողովրդի ցասման՝ դէպի մահմէտական տիրապետութիւնը, առաջ խաղաց դէպի Կովկաս։ Քրիստոնեայ Վրաստանի հետ միասին, քրիստոնեայ Արարատեան երկիրն էլ հասած համարեց փրկութեան ժամը։ Հայութիւնը իր վրայ առաւ ուղեցոյցի դերը մի երկրի մէջ, որ իր քրտինքով էր ողողուած, բայց որը անծանօթ էր եկւոր տիրապետողին։ Վրաստանում այդ կատարեց զինասէր աղնւականութիւնը. Հայաստանում խաչակիր հոգևորականութիւնը, որ գերիշխող ուժն էր կրօնական պայքարի այդ շրջանում... Եւ ժամանակի հայկական ամենաքաջ գործողը, միաժամանակ ամենատաղանդաւոր քաղաքագէտը իր ժողովրդի մէջ՝ Ներսէս Աշտարակեցին՝ իր ձեռքն առաւ շարժման դրօշը։ Երևացին հայ կամաւորների խմբեր։ Եւ ոգևորուած Ներսէս 1826-ին այսպիսի կոչ ուղղեց իր հօտին.

«Հայե՛ր,

Հասնում է ժամը Արարատեան երկրի եւ հայ ժողովրդի ազատութեան, հասնում է ժամը, երբ նախաթոռ Էջմիածինը պիտի վերականգնէ իր նախկին անկախութիւնը։ Ոտի կանգնեցէք, ապատամբեցէք, քաջարի հայեր, թօթափեցէք պարսկական լուծը, ցնծացրէք ալեզարդ Մասիսը, արեամբ ողողեցէք մայրենի երկիրը, ապա ապրեցէք ընդմիշտ ազատ եւ անկախ։

Ժամ է, ժամանակ։

Առա՛ջ. այժմ կամ երբէք»...

Արաքսի սգաղգեաց ափերին արթնացող հայութիւնը քաջութիւններ գործեց և ռուսական տիրապետութեան համար իր անձնուիրութեան անջնջելի ապացոյցներ դրոշմեց այն հողի վրայ, ուր պարսիկ աշխարհը օրհասական գալարումներ էր կատարում՝ նահանջի չ'ենթարկւելու համար։ Երազի օրեր էին։ Ներսէսը, իր ոգևորութեան աղբիւր էր շինել այն խոստումները, պաշտօնական և գաղտնի, որ տրւում էին Պետերբուրգից, յանուն հայկական ինքնավարութեան՝ Արարատեան երկրում, որը լեցւում էր, շնորհիւ քաղաքագէտ վեղարաւորի, հայ գաղթականներով, եկած պարսկահպատակ վայրերից։

Հայկական ինքնավար նահանգներ, ազատած եկեղեցի, մահմէտականութիւնից փրկւած Էջմիածին, քրիստոնեայ հովանաւորութիւն,—ո՜հ, որքան գեղեցիկ թւացին այդ խօսքերը, և որքան հրապուրիչ ապագայ հեռանկարը...

Արարատեան նահանգի տիրապետութիւնից մի քանի տարի միայն անցած, 1837-ին Նիկոլայ Ա. կայսրը այցելեց Էջմիածինը, նորանուաճ երկրի „սիրտը“ և „սրբազան“ լեռը։ Նա անցաւ Ախալցխայի վրայով։ Այդ փոքրիկ, թիւրքաց լծից նոր ազատուած քաղաքում՝ կայսրին ներկայացաւ հայկական գաղթականութեան նշանաւոր ղեկավար Կարապետ արքեպիսկոպոս, և մօնարքի՝ այն խօսքին՝ „Ցայտնեցէք, ի՞նչ կը կամենայիք ինձ՝նից“, պատասխանեց,

«Այս մի բուռն հայ ժողովուրդը պաշտպանեցի իմ թոյլ ուժերով մահմէտական երկրում. մինչ բերի քո հզօր թեւերի տակ։ Այսուհետ, մեծ արքայ, դու եղիր նոցա հայրը եւ պաշտպանը։ Իմ հայ ազգը քեզ եմ յանձնում եւ քեզ—Աստծուն»։

Հազիւ մի ամիս էր անցած, երբ Նիկոլայ Ա. հասաւ հայոց կրօնական կենտրօնը։ Յովհաննէս կաթողիկոս, Նիկոլային ուղղած ողջոյն-ուղերձի մէջ, իմիջի այլոց, այս խօսքերն է ասում.

«... Վերջապէս կատարեցաւ ակնկալութիւն Քեւ փրկեալ Հայաստանի։ Ահա կաս արդէն առ սեղանաւ տաճարիս, յորում 'ի տարուց անտի հանդերձեալ է Քեզ օրհնութիւն երկնից։ Ահա տեսանեմք զամենասիրելի թագաւորն մեր եկեալ կատարելագործել զհաստատութիւն՝ զոր պարգեւեալ է նա աստուածային տաճարիս... Յայսմ միաբանական տօնախմբութեան մերում, վասն այցելութեան Քոյ հինաւուրց տաճարիս այսմիկ սրբոյ, եկեղեցիս մեր սուրբ՝ մատչի առաջի Քոյ սիրալիր յարգութեամբ. ի տաճարիս այսմիկ ընդառաջ ելանէ գրկախառն, եւ ինքնին իսկ արկանի առ Քեզ անձնծայութեամբ եւ աղերսանօք, որպէս զի ընկալցիս զնա յարքայական գիրկ Քոյ»...

Այդ տեսակ խօսքեր, իբրև արտայայտութիւն ընդհանուր տրամադրութեան, երբեմն նոյնիսկ ծայրայեղ շեշտով, ռուսական տիրապետութեան սկզբներում յաճախ լսւեցին հայ ժողովրդի հոգևոր ներկայացուցիչներից, եկեղեցիներում, հանրային դիմումների մէջ, կոնդակներում, հանդիսաւոր ժողովների մէջ։ Եւ այդ բոլորին ռուսաց գահի պետերը պատասխանեցին նոյնպիսի գրաւիչ ոճերով, „իրենց սրտին“ շատ մօտիկ յայտարարելով Հայկեան ազգը, նրա շահերը, նրա խաղաղութեան և ազատութեան խնդիրը...

Սակայն երբ—ասենք ժողովրդական դարձուածքով—„ոտը ամրացաւ“, երբ միապետական իշխանութիւնը այլևս կարիք չունէր ոչ հայ հոգևորականութեան և ոչ ժողովրդի „առաջամարտիկ“ ուժերին՝ մահմէտական գրոհը ջարդելու համար, հովերը փոխուեցին, լսւեցին այլ խօսքեր, և շուտով՝ այլ սպառնալիքներ։

Միշտ այն մոլորման մէջ, որ հայ ազգաբնակութեան տրամադրութեան և շարժման ղեկը հոգևորական դասի ձեռքն է, և հետևաբար գլխաւոր զսպանակը՝ Էջմիածնում, այնքան կարևոր իր անցեալով, Պետերբուրգի իշխանութիւնը յաճախ ծայրայեղ միջոցներով, երբ կովկասեան փոխարքայի պաշտօնը կատարում էր մի „քարասիրտ“ մարդ, և երբեմն չափաւոր միջոցներով, երբ այդ պաշտօնը գտնւում էր „չափաւոր“ ձեռքերում, սկսեց հարւածներ տալ Էջմիածնի գահակալութեան, դեռ Գէորգ կաթողիկոսի կենդանութեան օրերում։ Այդ ժամանակ էր, որ Երևան եկան կաթողիկոսի իրաւասութեան խնդիրներ, վանքի արտօնութեան հարցեր, կալւածական խնդիր, դպրոցական հսկողութեան հարցեր... Եւ կարճ ժամանակում, նախկին անջատ, ըստ երևոյթին միմեանց

հետ ներքին կապ չունեցող պահանջները փոխարկուեցին յայտնի սիստեմի և Էջմիածինը քաղաքական շղթայով կապելու տենչը մտաւ պետական ծրագիրների շարքը։

Սկսած 60-ական թուականներից մինչև 90-ական թուականները, այդ ծրագիրը իրագործուեց չափաւոր եղանակով, մեծ զգուշութեամբ, նոյնիսկ երբեմնակի „զինադադարով“։ Դա ունէր իր պատճառը։

Կովկասն ու Անդրկովկասը, ճշմարիտ է, խաղաղացրուած է, կամ աւելի ճիշդ՝ հպատակեցրած վերջնականապէս։ Թիւրքիայի կողմից ռուսական տիրապետութեան վտանգ չէր սպառնում—սուլթանները այլ ցաւեր ունէին, ցաւեր՝ աւելի խոր և աւելի վտանգաւոր։ Պարսկաստանը՝ ջարդուած, ոչ միայն վտանգաւոր թշնամի չէր, այլ „հաւատարիմ“ հարևան։ Ներսը—Կովկասի բոլոր կէտերում—մարած էին ապստամբութեան վերջին նշանները. ազատութեան կրակը հանգած նոյնիսկ լեռների ծերպերին։ Վերջինը Շամիլն էր, նա էլ արդէն քաւում էր իր ազատասէր մեղքերը հեռու՛, շատ հեռու՛ իր պաշտած լեռներից... Սակայն, այդ բոլոր ներքին „աջողութիւնների“ հետ միասին, դեռ գոյութիւն ունէր մի այլ խնդիր, քաղաքական մի կարևոր ծրագիր.—դա Թիւրքաց Հայաստանի և դրա հետ միասին Փոքր-Ասիայի ծանօթ ծրագիրն էր։ Ամենային պալատում դեռ մինչև այսօր էլ կանգուն է սլավ վերհպետութեան այն կտակը, թէ ռուսաց միապետութեան է պատկանում Ստամբոլը, իր ս. Սոֆիայի գմբէթով, և Պարսից ծոցը՝ ովկիանոսի նման լայն քաղաքական շահերով։ Իսկ Հայաստանը մի բանալի է, անխուսափելի շաւիղ դէպի վերջինը, դէպի այդ կարևոր ծրագրի իրականացումը։

Դէպի Պոլիս արշաւելու համար՝ Բալկան փոքրիկ ազգութիւնների համակրանքը վայելել, իսկ Փոքր-Ասիական ծրագիրների համար՝ Թիւրքահայ ժողովրդի սէրը—սա եղաւ կառավարութեան քաղաքական „հեռատեսութեան“ հիմքը. իսկ այդ համակրանքը ձեռք բերելու, ուրիշ խօսքով, երկրի տիրապետութիւնը, հարկաւոր բոպէին աւելի հեշտ դարձնելու համար, նոյն կառավարութեան կարծիքով, միշտ պէտք էր իր կողմն ունենալ Էջմիածնի, իբրև կրօնական ազդեցիկ կենտրոնի, աջակցութիւնը, և ահա թէ ինչու նա ջանք չխնայեց բարձր պահելու կաթողիկոսի հեղինակութիւնը և հմայքը Թիւրքաց հայերի վրայ։

Թիւրքաց կառավարութիւնը ընդհակառակը, ջանաց, կատարելապէս հասկանալի պատճառով, չէքացնել այդ հեղինակութիւնը։ Դա մի մրցումն էր երկու բռնապետ երկիրների մէջ։ Պետերբուրգը միշտ ձգտեց Էջմիածնի գահի վրայ ունենալ այնպիսի գահակալներ, որոնք թեքուած էին դէպի Ռուսաստանը. Պոլիս հակառակը։ Սուլթանի կառավարութիւնը շատ անգամ փորձեց բարձրացնել Սիսը և Աղթամարը, մանաւանդ առաջինը, որ իր աշխարհագրական դիրքի պատճառով ազատ է ռուսական ազդեցութեան երկիւղից, որպէս զի ջլատի Էջմիածնի գերիշխանութիւնը և մի պատ դնի Թիւրքահայերի և Արարատեան կրօնական աթոռի յարաբերութեան մէջ։ Բայց անաջող։

Անցեալը և կրօնական հմայքը շատ զօրեղ նեցուկ եղան Էջմիածնի ազդեցութեան, մանաւանդ որ ռուսաց կառավարութիւնը իր կողմից, քայլ առ քայլ ձգտելով նսեմացնել ամենայն հայոց կաթողիկոսի իրաւասութեան սահմանները Կովկասի հայերի նկատմամբ, միաժամանակ ձգտեց նրա իշխանութիւնը, գոնէ ա ն ա ն ա կ ա ն, զօրաւոր պահել այն հայերի վրայ, որոնք իր սահմանների միւս կողմն էին ապրում... Բ. Դուռը յաճախ միջոցներ ձեռք առաւ խզելու Կ. Պոլսի հայոց պատրիարքների յարաբերութիւնը Էջմիածնի հետ, նրան վերագրելով քաղաքական վտանգաւոր նպատակներ, իսկ Պետերբուրգի կառավարութիւնը ընդհակառակը, միշտ ջանալով պահպանել տալ այդ յարաբերութիւնը՝ յօգուտ Էջմիածնի գահակալութեան, միաժամանակ միջոցներ որոնեց, որպէս զի ամէն մի կարևոր գրագրութիւն և դիմումն արտասահման՝ լինի իր գիտութեամբ, իր միջոցով, հետևաբար, իր հաւանութեամբ։ Ահա այդ պատճառով է, որ Էջմիածնի գահակալը պարտաւորուած է իր բոլոր արտաքին դիմումները անել ռուսաց արտաքին գործերի մինիստրի միջոցով, և բոլոր այն թղթերը, գրագրութիւնները, կոնդակները, որոնք գնացել են արտասահման ծածուկ, կողմնակի կերպով, առանց մինիստրութեան միջնորդութեան, համարուել են հակակառավարչական ձգտումների արդիւնք, և եթէ այդպէս չեն համարուել կամ յանդիմանութեան չեն ենթարկուել, երևի միայն այն պատճառով, որ կարևոր չեն եղել, կամ անյարմար է դատուել աղմուկ յարուցանել այդ առիթով։ Կան չարիքներ, որոնք մատնուում են անուշադրութեան, աւելի մեծ չարիքներ չստեղծելու համար...

Բայց այն օրից, երբ հայկական կոտորածների և 95-ի Մեսօրանդումի անկման պատճառով՝ Թիւրքահայերի խնդիրը կորցրեց իր նախկին „վտանգաւոր“ կերպարանքը, երբ թ ո յ լ ա տ ր ւ ա ծ ջարդերից յետոյ՝ Պետերբուրգի կառավարութիւնը համոզուեց, որ հայ տարրը, Թիւրք-հայկական յարաբերութիւնների խիստ թշնամացման պատճառով, այլևս անկարող է խաղալ քաղաքական այն խոշոր դերը, որ վերագրուում էր նրան մինչև 80-90-ական թուականները, այդ օրից միապետութեան դիրքը դարձաւ վճռական, վերաբերմունքը՝ խիստ, յարաբերութիւնը՝ անսանձ, ծրագիրը՝ դժոխային։

Այլ ևս կարիք չէին տեսնում „սերեմոնի“ անելու „հայկական“ քաղաքականութեան, հետևաբար կաթողիկոսութեան հետ...

Է. ԱԿՆՈՒՆԻ

(Կը շարունակուի)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԲԱՂԷՇԻ

1 սեպտեմբեր, 1902

Ձմեռը վրայ կը հասնի։ Հայ ազգաբնակութիւնը առանձին ուրախութեամբ մը կըսպասէ որ շատ շուտով ձեան ճերմակ պատանքով փաթթուի իր լերկ ու մերկ խցիկներու մէջ, յուսալով որ գուցէ բնութեան այդ խիստ եղանակին պիտի մեղմանան քրդերու վայրագութիւնները, Թիւրքերու դժոխքմբեր արարքները։

Հակառակ եւրոպական այս տարւայ ցոյցերու, յուզումներու՝ ժողովրդի դրութիւնը նոյնը մնաց և ներքին կերպով աւելի վատթարացաւ։ Տաճիկ կառավարութիւնը թէև յայտնի կոտորածներէ, ջարդերէ խոյս տաւ, սակայն չմոռացաւ երբէք հայի բնաջնջման ծրագիրը։

Հերթէզ գաղթականներով լեցուեցաւ Մշոյ դաշտը. ամէն օր նամակներ կը տեղային դաշտի գեղերէն այդ

նորեկ հիւրերու չարիքներու նկարագրութեամբ։ Հայերը հարկադրուած են անոնց ապրուստի բոլոր պիտոյքները հոգալ։

Չենք կրնար մանրամասնութեամբ նկարագրել խոտերու, հացահատիկներու, տուներու հրկիզումը, որոնք սովորական երևոյթներու կարգն անցած են. ասոնք հայի գիշերային արեգակներն են և պէտք է փայլին ամէն դի և ամէն ուրեք, ուր կայ հայ մը, բարբարոսներու հաճոյքը կատարեալ ընելու համար։

Համիդիէներու արարքները արդէն անհաշիւ և անարգել են. կառավարութիւնը իրաւունք չունի սահման մը դնելու ասոնց կամայականութեանց։ Մեր ներկայ գրութիւնը ընթերցողը թող որանէ հետևեալ նախադասութեան մէջ, որ ամէն մէկ մեծ ու փոքր թիւրք պաշտօնեայ, քիւրդ աղա, շէյխ, մոլլա կ'ըսէ. „Չկայ թագաւոր, չկայ պետութիւն, ամէն մարդ թող իր գլխուն ճարը գտնէ“։

Մայիսի սկիզբները Ախլաթի Սօխորդ գիւղի 223 ոչխարները կը յափշտակեն օր ցերեկով Չխուրցի քրդերը Նէմրութ լեռնէն։ Գիւղացիք Բաղէշի կառավարութեան դռները երկար ժամանակ թափառելէ յետոյ, յուսահատ ետ դարձան։

Նոյն օրեր Մոտկանք ըսւած աշիրէթի քրդերը Փափշէն գիւղի ռէս Գաբօյի ոչխարները թալան տանելու ժամանակ, անզէն գիւղացիք հաւա՛ր պոռալով կը հասնին, քրդերը հրացանի գնդակներով կը պատասխանեն. ռէսի եղբայր Մելքոն թևէն կը վիրաւորուի։ Կառավարութեան դիմում ըրած միջոցին վկաներ կը պահանջէ. հայի վկայութիւնը անընդունելի է, հակառակ պարագային բողոքողները կը բանտարկուին։ Փափշէն հայ գիւղը Բաղէշի կուսակալանիստ քաղաքէն կէս ժամ միայն հեռու է։

Յուլիս 21-ին Ծափօր գիւղի ռէս Յակոբ Կարապետեան սպաննուեցաւ գիւղի Օսման աղայի ծառաներէն, որովհետև Օսմանը կ'ուզէր տիրանալ գիւղին և Յակոբի եղբօր աղջիկ Տիլպարը կնութեան առնել, և Յակոբը համարձակած էր ընդդիմանալ աղջիկը փախցունելով Բաղէշի մօտիկ Փօռ գիւղը, ուր կը մնայ ցարդ։ Ոչ ոք չհամարձակիր ամուսնանալ աղջկայ հետ։

Յուլիս 25-ին բաղէշցի երիտասարդ մը պտոյտի համար կը հասնի քաղաքի Մաղրի Ձոր կոչուած վայրը, որ բաւական խորունկ ձոր մըն է և ունի աննշան գետակ մը, հոն կը նկատէ երկու դիակներու կտորներ, զորս կը յօշոտեն շուները։ Երիտասարդը քաջութիւն կ'ունենայ մօտէն զննելու այդ ճիւաղային արարքը։ Մինչև անգամ կը զանազանէ իսլամի և հայի տարբերութիւն որոշող ծանօթ անդամները։ Կը հաստատուի որ ասոնք Մշոյ դաշտէն երկու ողորմելի հայեր են եղեր, որոնք կուգան Բաղէշ առևտուրի համար, հոդ պատահելով թիւրք լոտեներու, կը յօշոտուին անոնցմէ։ Մաղրի Ձորը հազիւ 5-10 վայրկեան հեռաւորութեան վրայ է այն պահականոցէն, ուր սուլթանի ոստիկանները կը հսկեն ժողովրդի անդորրութեան ու խաղաղութեան վրայ։

Ուրիշ փաստ մըն ալ նոյն եղերական գործը հաստատող։ Մշեցի հայ մը թիւրքի մը ընկերակցութեամբ Բաղէշ կուգայ. յիշուած ձորի մօտերքը հասած միջոցին, վերջինս պարծենկոտութեամբ մը կ'ըսէ. „Ձեր ֆէդայիներէն երկուքը քանի օր առաջ այս ձորի մէջ սատկեցուցինք ալն“։ Ոչ ոք կը համարձակի փնտրել, տեսածը յայտնել, առաջին խօսողը իբրև ոճրագործ բանտ կը տարուի։

Օգոստոս 3-ին Բաղէշէն մէկ ժամ հեռու Փարփանդ գիւղի վրայ Մօտքանցի քրդերը յարձակելով, գնդակներու տարափի ներքև կը ծածկեն գիւղը։ Հայերը սարսափահար դէս ու դէն կը փախչին, վախնալով ընդհանուր կոտորածի ուրուականէն։ Քրդերը կը մտնեն տուները, կը կողոպտեն բոլոր ունեցածները՝ ոչխար, տաւար, գոյք ևլն։ Գիւղացիները իրողութիւնը հասկնալով կը վազեն և գիւղի մէջ գտնուող ոստիկաններուն բաւական կաշառք տալով կ'աղաչեն գոնէ աւարի մէկ մասը ետ առնել. ոստիկանները կը հասնին քրդերու ետևէն, անոնցմէ ալ կը յաջողին բան մը շորթել ու վերադառնալ։ Ասոնք ալ ահա կը մուրան Բաղէշի փողոցներու մէջ. կառավարութիւնը սրտի գոհունակութեամբ մը կը տեսնէ այդ բոլորը։

Վա՜յ այն հայ գիւղին, ուր թալանի ու ջարդի հանդէպ իսկ անկանոն զէնքի մը ձայն լսուի. անմիջապէս հոս կը հասնին կառավարութեան ենիչէրիները. կըսկսին երկար ու բարակ հարցաքննութիւններ, բանտարկութիւններ, դրամական տուգանքներ ևլն։

Քանի ամիսներէ իվեր Խուլթիկ հայ գիւղացիք թափուած Բաղէշի փողոցներ՝ կը բողոքեն իրենց դրացի Խումաճ քրդաբնակ գիւղացի Ֆարսանդ աղայի արարքներուն դէմ։ Խուլթիկը կը բաղկանար 4-500 տունէ, այսօր հազիւ ունի 200 տուն, Բաղէշէն երկուուկէս ժամ հեռուն. միակ հայ գիւղը այդ կէտի վրայ։

Երկար տարիներէ իվեր յիշեալ աղան անարգել ի գործ դրած է աներևակայելի գազանութիւններ, առևանգումներ, բռնաբարութիւններ, հարստահարութիւններ, ծեծ, թալան, սպանութիւն ևլն։ Բաղէշի կառավարութիւնը խլանալով խուլթիկցիներու անվերջ բողոքներէն, վերջապէս դատի հրաւիրեց Ֆարսանդ աղան։ Խուլթուկցին՝ աղայի գազանային մէկ արարքի հանդէպ տասնաւոր վկաներ բերաւ. մինչև անգամ շատ մը հայ կիներ պահ մը մոռացած հայկական օջախի ամօթխածութիւնը՝ դատարանի մէջ բացարձակ խոստովանեցան իրենց բռնի առևանգումը, լլկումը... Սակայն անամօթ կառավարութիւնը բաւական չհամարեց այդ բոլորը և Ֆարսանդը, իր պոռնկացած արդարադատութեամբ, ազատ արձակեց։ Խուլթիկցին այս անակընկալ իրողութեան առջև շուարած չգիտէ ինչ ընելիքը. գաղթելու, հեռանալու միջոց ու ճար չունի. համբերելու, տանելու սիրտ չունի. միանգամից ոչնչանալու ճամբայ չունի։ Աղայի ազատ արձակուելէ յետոյ, սպառնալիք, գողութիւն, կապուտ-կողոպուտ ամէնօրեայ դարձած իրողութիւններ են, այլևս չեն համարձակիր սուլթանական ոճրագործ կառավարութեան դիմելու։

Այս խնդիրը ամէն մէկ հայ և իսլամ ազգաբնակութեան խօսակցութեան նիւթ դարձած էր. օր մըն ալ անգլիական հիւպատոսը հետաքրքրուելով՝ ներկայ կը գտնուի դատարանին։ Թիւրք կառավարութիւնը անմիջապէս հիւպատոսի ներկայութիւնը խուլթիկցիներուն վերագրելով և մտացածին նկատումներով յիշեալ գազանի չարագործութեանց հանդէպ բացարձակ պաշտպանողական դիրք բռնեց։ Անձամբ խօսեցայ խուլթիկցիներէ մէկուն հետ. „կրնամ ըսել թէ Ֆարսանդը չպիտի ազատուէր, եթէ այդ մէկ օրն ալ հիւպատոսը ներկայ չըլլար դատին“, ըսաւ։

Ահա ձեզ նմոյշ մը տաճկական արդարադատութեան։

Օտարների ներկայութիւնը գուցէ երևան կը բերէ իրենց խայտառակութիւնները, գուցէ չպարտկուի իրենց վայրենի գիտումները։ Հոն մտնողը պէտք է խղճի, զգացման դռները փակէ։

Օգոստոս 22-ին Հասնանցի համիդիյէ աշիրէթէն յայտնի սուլթաններ՝ Սիւլէյմանի և Բրզախի խուլամներ (մշակ, ծառայ), երեկոյեան ժամը 12-ին, Զրհոր գիւղի կալերուն վրայ յարձակելով 45 եզներ տարան. երբ կիներ ու աղջիկներ փաթթուած եզներու վզէն, կ'աղաչեն գոնէ իւրաքանչիւրին մէկ մէկ հատ թողնել, անհոգ ծիծաղով մը՝ „մենք մինչև հոս գալէ, յոգնելէ յետոյ, ի՞նչպէս կարելի է մէկն էլ թողնել ձեզ", կը պատասխանեն։ Սոյն գիւղի բոլոր եզները նոյն համիդիէների կողմէ տարուած էր անցեալ ամրան։ Խեղճերը իրենց գոյութիւնը քարշ տալու համար, հողերը գրաւի դրած էին թիւրքերու և քրդերու ձեռքին և մէկ մէկ զոյգ եզ կրկին ձեռք բերած. այս տարի թալանի հետ հողերն ալ կորսնցուցին։

Կրկին դիմեցին Բաղէշի կառավարութեան։ Կառավարութիւնը ոստիկանաց հարիւրապետը, Ախլաթի տառապանաց գործիք յայտնի Ալի պէյ, մի քանի ոստիկաններով ղրկեց Մանազկերտ։ Մէկ երկու օր յետոյ Ալի պէյը հեռագրով ետ կանչուեցաւ։ Զրհորցիները դեռ կը դեգերին կառավարութեան դռներ ծեծելով. Բ. Դուռ, այս կամ այն պաշտօնատուն դիմումներ ընելով։ Ամենէն ուշագրաւը այն է՝ որ ցարդ գոնէ ոճրագործութիւններն ու գազանութիւնները կը կատարուէին գիշերային խաւարի մէջ, իսկ այժմ օր ցերեկով, կառավարութեան քթի տակ, ի տես արար աշխարհի։

Սեպտեմբեր 3-ին, վերը յիշուած Փարսանտ հայ գիւղացի հարուստ համարուած Թումս անուն հայի տունը Մոտկանցի քրդերը մտնելով՝ կը սպաննեն զայն, անոր մայրը և ծառան, կը կողոպտեն ամէն ինչ, մինչև անգամ սպաննուածները կը մերկացնեն։ Դեռ Թումսյի տունը արիւնով ներկուած էր, տեղւոյս կառավարութիւնը այդ արեան գողոշիներու մէջ ալ քաղաքական գոյն մը տալ մտածեց, ձերբակալեց գիւղացիներէն հինգ հայեր և ամէն ջանք կը թափի վերագրելու անոնց։ Սպաննուածի բախտի բերմամբ ազատուած կինը չը համարձակիր քրդերու անունը տալ։

(Կը շարունակուի)

ՏԵՂԵԱԿԻՐ ՍՂԵՐԴԻ

8 Նոյեմբեր, 1902

Փետրուար 2. — Տիւսադէյի գիւղացիները, անասնոց կեր գտնելու համար, երբ Խանիկ կերթան՝ ճամբան ճեմիլ աղայի արբանեակներէն պաշարուելով՝ 13 էշ, մէկ ձի, 14 խուրձ, 14 չուան, մէկ ապա, 2 բաճկոն, 2 դաշոյն կողոպուտի տալէ վերջ, հազիւ կը յաջողին ինքզինքնին ազատել։ Խնդիրը գեղին պաշտպան Ալըքանցի Օսման աղային ականջն հասնելուն պէս, կըստիպէ ռէյս Գալօն գեղը աւրելով հեռանալ բոլորովին, բայց ռէյսը պատասխանատուութեան տակ չ'իյնալու համար, չի կրնար գործադրել աղային հրամանը։ Կառավարութեան կը բողոքէ թէև, բայց լսող չ'ըլլար։

Փետրուար 7. — Պշերիկ գտառակի Պարսլէ գիւղացիներէն Մելքոն Տօնօ անուն 25-ամեայ երիտասարդը մեռնելէ և թաղուելէ յետոյ, տեղւոյն ֆագիներու կողմէ, ի նախատինս, օր արևով գերեզմանէն կը հանուի և դիակը յօշոտուելէն յետոյ՝ բացօդեայ կը ձգուի։ Քըստմնելի և սրտաճմլիկ չէ՞ք գտներ այս պարագան։

Պշար աղան, որ ցարդ Ղարզանի մէջ ամէն տեսակ չարագործութիւն ու խժդժութիւն անպատիժ ի գործ կը դնէ, փետրուարի 14-ին 150 զինեալ մարդիկներով, Զոգի կառավարութեան պաշտօնատունը կը մտնէ և կը բռնադատէ տեղին գայմագամը ներքին գործոց նախարարութեան հեռագրելու, որ Պշար անձնատուր եղած է և կայսերական բարձր գթութիւնը կը հայցէ։ Եւ իր ուղածը հեռագրուելէ վերջը կը ձգէ կը հեռանայ։

Մինչոցէ մ'ի վեր Մուշէն Սղերդ փոխադրուող ժանտարմներու հազարապետ Նուրի պէյ, քաղաքիս շուրջը խուզարկութիւններ կը կատարէ ցերեկ ու գիշեր, իբր այն թէ ֆէդայիք հոս մուտ գործելով, հայ ժողովուրդն կը պատրաստեն կառավարութեան դէմ. և այս իսկ պատճառաւ հայոց թաղի մէջ մնայուն պահականոց մը կը հաստատէ Զոր աղբիւրին վերևը (քաղքիս արևելեան կողմ), հայու պատկանող բարձրադիր տան մը մէջ, խեղճ տանտէրը իր զաւակներով դուրս ընելով։ Պահակ զօրքերուն գործած անբարոյականութիւնները, կողոպուտները, անգթութիւններն ու խայտառակութիւնք աներևակայելի ու աննկարագրելի են. օրն ի բուն աղբիւր գացող կնիկներուն մէջ կը շրջին և անպարկեշտ վերաբերմունքով կը վիրաւորեն հայուհիներուն պատիւը։ Ցարդ 5-6 գիշերային բռնաբարումներ ի գործ դրուած են։ Կիւրակի օրեր զբօսանքի համար դուրս ելնող հայ երիտասարդներն կը խուզարկեն և փոխանակ զէնքի... դրամ ալ կը յափշտակեն՝ լաւ մը ծեծելէ յետոյ։ Դիտելի պարագայ մ'է որ քրիստոնեայ բօլիսի կամ ժանտարմայի չեն վստահիր այսպիսի տեղերու պահպանութիւնը ինչպէս նաև մեծ մկկիթիին (զի ամէն ուրբաթի աղօթքի ատեն խումբ մը զօրք մզկիթի առջև կը հսկէ յ'աւարտ աղօթքի)։

Շաքիր փաշայի բարերարեալ հայ պաշտօնեաներն, չ'ամչնալով իրենց հանդէպ ցոյց տրուած անվստահութեան ու նախատինքին, իհարկին թիւրքին ձեռքը կոյր գործիք դառնալու վատութիւնը յօժարութեամբ կըստանձնեն լրբօրէն։ Հոգւով մարմնով կորսուած արարածներ, աղիճ-որդիներ, հայ համայնքին թշուառական թափթփուքներ։ Կառավարութեան այս ձեռնարկը ամուլ կը շարունակէ մնալ։ Ինչպէս շատ անգամ գրած եմ, քաղաքիս վաճառական դասը զուտ թիւրքերէ բաղկացած է։ Մարդիկ իրենց այս տարեան վնասը, որ առուտուրի կայունութիւնէն գոյացած է, դարմանելու համար՝ սա վարպետ միջոցը կըստեղծեն ու կը գործադրեն։ Մէկ կողմէն ձայն կը հանեն, թէ դրամին սակը իջած է $^0/_0$30 և այդպէս կը յաջողին մէկ կողմէն իրենց ապրանքները քշել և միւս կողմէն իրենց մեծագումար պահանջները գանձել ի վնաս միջակորեար և աղքատ ժողովրդին։

Փետրուար 22. — Պշարի եղբայրը Լէմիլ իր արբանեակներով կը կոխէ բնիկ պէտացի մուխթար Սարգիսեան Թումսյի տունն և ամբողջ ընտանիքը խոշտանգելէ յետոյ՝ աւարի կուտան անոր 4 եզ, 4 կով, 2 էշ, 14 ոչխար, 3 պղինձ, 1 կաթսայ, 2 պնակ, 2 տապկոց, դգալ, սանտր, 2 թոփ կտաւ, 4 նիւկի մանած, փռելիք, հանդերձեղէն, վերջապէս տան բոլոր անասուն-

ներն ու սարքերն։ Բանը Հոս է որ խեղճը չի համարձակիր բողոքել, զի կը վախնայ սպաննուելէ։

Փետրուար 2Ա. — Ղարզանի Սըփհի գիւղացիներէն հայ երիտասարդ մը անժառանգ մեռնելով՝ Պշարի աղան անոր բոլոր հարստութիւնը (անասուններն ու ինչքերը) 12,500 ղրշ. արժողութեամբ կ՚առնէ կը տանի։

Մարտ 5.—Ճէմիէ աղան Տիւսադա գիւղը երթալով՝ տեղացւոց հօտը՝ 180 կաթնտու ոչխար իր հայ հովիւովը մէկտեղ կը գերէ, կը գերբէ։ Քանի մ՚օրէն յետոյ, թէև հովիւը եէզիտիի մը բարեխօսութեամբ, կ՚ազատի, բայց հօտը բնականաբար ոչ։

Մարտ 7.—Այս առտու Գուրպան պայրամի առթիւ Սղերդի բոլոր իսլամութիւնը, սովորականին պէս, կը հաւաքուի Ուլու Ճամին „աւագ-դուրպէն“ (աղօթք) կատարելու։ Մզկիթին շուրջը, զգուշութեան համար, արդէն ոստիկան-զինուորներու շղթայով մը պաշտպանուած կըլլայ։ Նոյն առաւօտ մեր ազգայիններէն ոմանք, ժամերգութենէն յետոյ, գերեզմանատուն կը դիմեն, նախորդ օրը մեռնող ոսկերիչ Սարգիսի գերեզմանին վրայ կատարելի „Այգուց“ին ներկայ գտնուելու համար, ինչ որ մեր ալ սովորութիւնն է։ Հ՚ըսես մերազնեայք ճամբան յիշեալ մզկիթին վրայէն անցած ատենին, յանկարծ պահակ զինուորներէ կը շրջապատուին և զորս դու պատուիրեցիր հրացանի կոթով կուշտ ծեծ մը կուտեն և կիսամեռ վիճակի մէջ հազիւ հազ կը յաջողին ճողոպրիլ գազան զինուորներու ձեռքէն։ Այս դէպքէն երկու ժամ վերջ՝ Մուրատ անուն ազգայինը, որ նոյն օրը մեռնելու դժբախտութիւնը կունենայ, տարբեր ճամբով գերեզմանատուն տարուելու ատեն, հանդիպող խումբ մը թիւրք երիտասարդներէ դիակը դագաղէն վար կ՚առնուի և պահ մը փողոցներու վրայ տարուելէ յետոյ, հազար աղաչանքով վերջապէս կ՚ազատուի և ապա կը թաղուի։ Մինակ ատ չէ, ամէն անգամ որ յուղարկաւորութեան մը առիթով գերեզմանատուն կերթանք, հանդիպող ամէն թիւրք՝ մեծ, պզտիկ անխտիր պիտի անարգէ մեր խաչ, կրօնք, վարդապետ, քահանայ, մեռելներ... Մեր գերեզմանները կը պղծեն, գերեզմանաքարերը կը կոտրեն, կը տանեն։ Գերեզմանատունը շրջապատ չունենալուն և Համիդ աղային արտին կից ըլլալուն՝ մէկ երրորդ մասը արդէն հերկուած և իւրացուցուած է Հարևանի կողմէն։

Մարտ 10-ին կիւրակի օրը կորցի Օհան Ստեփանեանի կնիկը Մընէ, երբ բանջարեղէն ժողվելու կերթայ սարը, դրացի Ալբքան աշիրէթէն Տէրվիշ և Ալիքօ, իրենց հինգ եղբայրներուն հետ, զայն կ՚առևանկեն և բռնի կը տանին։

Մարտ 19.—Առաւօտեան ժամը երեքին շուկայի հրապարակի վրայ դաշոյնի երեք հարուած կ՚ընդունի քաղաքիս էն նշանաւոր, բայց ինկած հարուստներէն Մինաս Պասմաճեան անուն ծերունի ազգայինը, թիւրք երիտասարդ Ահմետ Սէլամոյի կողմէն, շէյխ Մահմուտի թելադրութեամբ։

Ցիշեալ ազգայինն մեծահարուստ մարդ մ՚էր. ունէր շատ դրամ, տուներ, արտեր, ջորիներ ևն, բայց Դէպքին ամէն բանէ զրկուեցաւ, բնակարանն ալ տաճկաց թաղին մէջ գտնուելուն՝ այդ արհաւրալից վայրկեաններուն մէջ ընտանիքովը իր դրացիներու ճնշման տակ իսլամութիւնը ընդունեց. տագնապները մեղմանալէն յետոյ նորէն իր եկեղեցւոյն գիրկը դարձաւ։ Մոլեռանդ մահմետականները աններելի յանցանք կը ճանչնան մ ի ւ ր թ ա տ ո ւ թ ի ւ ն ը (իսլամութիւնը ընդունելէ յետոյ, իր նախկին կրօնին դառնալը), զոր ի գործ դնողը իր կեանքովը միայն կրնայ քաւել։ Ասոր համար ասկէ 4 տարի առաջ իր 30 տարեկան առիւծին պէս տղան սպաննեցին քաղքէս դուրս և դիակը գետը ձգեցին, այսօր ալ զինքը վերաւորեցին. ոճրագործ երիտասարդը անպատիժ մնաց։ Վիրաւորեալին վիճակը ծանր է և յուսակտուր։ Ամբողջ քրիստոնեայք ահաբեկած են, ժամուրքով ու հազար վախով շուկայ կերթան։ Աստուծոյ սիրոյն ի՞նչ պիտի ըլլայ մեր վիճակը։

Մարտ 20.—Քոթիպի Էօմէրիսքան աղայի տղայք մօտակայ քաղդէաբնակ Գըդմոս գիւղն (50-60 տնուոր) կոխելով՝ 16 օսմանեան ոսկի կը պահանջեն։ Խեղճ գիւղացիք Սղերդ գալով՝ իրենց կանաչ ցանքերը ծախեցին և 15 ոսկին ճարելով տարին յանձնեցին անզգամներուն։ Երկու օր յետոյ կառավարութիւնը իմանալով՝ ձևակերպութեան համար մարդ ղրկեց չարագործներն ձերբակալելու, բայց անշուշտ կռահեցիք թէ ձեռնունայն ետ դարձան, ինչպէս կը դառնային միշտ։

Նոյն աղային նոյն տղայք Պէյքենտ գիւղի մէջ մնացած 4 հայ ընտանիքներէն 200 ղրշ. կը պահանջեն, բայց տղամարդերն չկրնալով վճարել, կը փախչին ընտանիք ու կալածներն թողլով անիրաւ քիւրդին ձեռք։ Հորս, հինգ աղա միջոցէ մ՚ի վեր իրենց արբանեակներ հայ գիւղերուն մէջ արձակելով՝ փութոյ պնդութեամբ դրամ կը հաւաքեն։

Այսօր Ռնտվանէն և շրջականերէն 30 հայեր հարըստահարութեանց երեսէն բոլորովին աղքատացած՝ ուղեւորուեցան Ատանա հոն բանւորութեամբ իրենց փորը կշտացնելու համար։

Մարտ 26.—Այսօր ընդհանուր ցնծութեան մէջ կ՚առաւօտէ Սղերդի իսլամական համայնքը, ամէն կողմէ տավուլ-զուռնա, ուրախութեան աղաղակ, խնդութիւն, զիրար շնորհաւորել, ս ա լ ա վ ա թ։ Ժողովուրդը՝ երիկ-կնիկ, մանչ ու աղջիկ կառավարութեան պաշտօնատան և բանտին կողմերը կը դիմեն։ Ի՞նչ է, ի՞նչ կայ։ Ամենողորմ և Հպատակասէր սուլթան Համիդ ներում կը շնորհէ յաւիտեան բերդարգելութեան դատապարտուած այն ոճրագործ հինգ թիւրք երիտասարդներուն, որոնք անցեալ 1896-ին, իրենց իսկ խոստովանութեամբ, սպաննած էին ամերիկեան միսիոնարութեան կողմէ հոս ղրկուած նպաստաբաշխ Իւսուֆ էֆէնտին և անոր մօտ եղած նպաստի 400 օսմանեան ոսկիէ աւելի դրամն յափշտակած։ Արժա՜ն և իրա՜։

Մարտ 29-ին պարըկճեցի Մուրատ և ասորի մը իսլամութիւնը ընդգրկեցին շէյխ Զիլանի ճնշման տակ։

Ա պ ր ի լ 2.—Թանզէ գիւղի Էօմէր աղային եղբայրը Հաղի որսի ատեն սպաննուեցաւ Մէհմէտէրէսուլ աղային ծառաներու ձեռքով։ (Այս դէպքին վրայ ծագող կուսակցական կռուոյն մանրամասնութիւնները ուրիշ առթիւ)։

Ա պ ր ի լ 5.—Էօմէր Իսքանի տղայքը՝ Հասան և Տէրվիշ՝ գիշերով Պէյքէնտցի Սահակին տունը կոխելով, կը կողոպտեն անոր 26 այծը և կանանց զարդերը։

Ապրիլ 5-ին Ռոքոթան աշիրէթի զանազան ցեղերու մէջ կռիւ ծագելով՝ եօթ հոգի սպաննուեցան, մի քանիներ ալ վիրաւորուեցան երկուստէք։ Այս կռիւը մեծ համաժատութիւններ պիտի առնէր, եթէ շէյխին միջամտութիւնը անմիջապէս չհասնէր։

Սղերդի կառավարական շրջանակներու մէջ և միւթէսէրիֆին ներկայութեան, երբ այս օրինակ դէպքերու

խօսք կը լայ, և եղած մարդասպանութեանց առաջքն առնելու միջոց մը կ'ուզեն խորհիլ։ Եահես փաշան հրապարակաւ կ'ըսէ. „է՞ ի՞նչ ընեմ... չե՞մ կրնար... մէկ ալ ինչո՞ւս պէտք. մարդ կը սպաննեն, ողջ ըլլայ թագաւորը, ինծի համրանքով ժողովուրդ չեն յանձնած եա՜“, Իրաւունք ալ ունի (՞)։ Քրիստոնէից երդուեալ թշնամին (փաշան) իր ազգայնոց նկատմամբ իսկ անողոքելի է եղեր։ Մայիսին երբ Սղերդէն հեռացաւ, 150 ոսկիի չափ պարտք թողուց զանազան վաճառականաց։ Պարտատէրներուն այսպէս կ'ըսէ. „է՞ ի՞նչ ընեմ, թագաւորը երբ ինծի պաշտօն տուաւ, գիտէր որ 800 ոսկի պարտք ունէի, մէկուկէս տարուան մէջ պաշտօնիս շնորհիւ կէսը վճարեցի, մնացածն ալ յետոյ“։ Շատ շուայլ կապրէր, թոշակը (75 ոսկի) իրեն չէր բաւեր, ըսել է ընդունած կաշառներով պարտքերը կը գոցէր։

Ապրիլ 11-ին Բաղէշէն Ամիթ գացող կարաւան մը, երբ Գուրէ-Բավալ ըսուած տեղը կը հասնի, յարձակում կը կրէ Ախիէ Եունիսի տղուն և ընկերներու կողմէ։ Զարագործները անօթի գայլերու պէս կը շրջապատեն կարաւանին հետ եղող արաբկիրցի միակ հայ վաճառականը, զոր նախ կը սպաննեն և ապա կը կողոպտեն անոր ձին, զէնքերն և ինչպէս կը հաւաստեն վրան ունեցած 400 օսմանեան ոսկին. իսկ ջորեպան քիւրդերուն կը խնայեն։ Խեղճին դիակը 5 օր դուրսը մնալէն յետոյ, կը թաղի 1-2 հայերու ձեռքով Հազզոյի մէջ։ Կ'ըսուի թէ կառավարութիւնը ետևէ է յանցաւորները և մեղսակից ջորեպանները ձերբակալելու։

Ապրիլ 12-ին, գիշերը, ճէպիլ 7 ընկերներով կը մտնէ Թիլ գիւղը, 5-6 ժամ հեռի Սղերդէն, և կը յափշտակէ Յարսեան Պողոսէն 5 գոմէշ, 1 կով, 1 եզ և 20 ոչխար։

Ապրիլ 13. — Խթման գիշեր է. պահապան զինուորները, որոնք քաղաքիս բարեկարգութեան հսկելու պաշտօնն ունին, հայոց դռները կարգով կը ծեծեն և կարմիր հաւկիթ կը պահանջեն, մերժողին ծեծի և զանազան սպառնալիքներու բաժին հանելով։

Ապրիլ 14.—Ս. Յարութեան-Զատկի առաւօտն է. կառավարութիւնը քաղաքապետին միջոցաւ լուր կը ղրկէ Սղերդի բոլոր քրիստոնեայ հոգևոր պետերուն, պահանջելով որ հանդիսապէս եկեղեցիներու մէջ բարեմաղթութիւններ տեղի ունենան վեհ. սուլթանին կենաց և արեշատութեան՝ իրենց ներկայութեանը։ Բարեմաղթութիւնները տեղի կ'ունենան իհարկէ, բայց բանը հոս է, որ տեղական կառավարութիւնը կըստիպէ որ իւրաքանչիւր եկեղեցին գրաւորապէս իրեն ներկայացնէ կարդացուած աղօթքներն ու բարեմաղթութիւնները։

Ապրիլ 20-25. — Զատիկ և Զատկայտա գիւղերուն հօտերը կը յափշտակուին գէօչէրներու կողմէն։ Յարդ կառավարութիւնը կողոպուտը ետ առնելու որևիցէ ձեռնարկ չէ ըրած, հակառակ գիւղացիներու կողմէ տրուած աղերսագրոց։

Ապրիլ 28-ին Կոփնտէապտի անուն գեղին առջև, 5-6 զինեալ քիւրդեր, կրստիպեն Ամէթէն, ջուրի վրայ լաստով եկող 40-է աւելի մարդիկը, որ լաստը եզերքին մօտեցնեն, և կը կողոպտեն զանոնք։ Զանազանաց վնասը 400 ոսկի կը հաշուի. Ճամրորդներուն մէջ հայ ընտանիք մը կար, մէկալները թիւրք, որոնցմէ մին՝ քաղ. գայմագամ։

Մայիս 1. — Ճէմսարք գիւղը (20 տնուոր հայ և ասորի) կը կողոպտուի ճէմիլի և արբանեակներու կողմէ։

Մայիս 3-ին Ազիզ անուն թիւրք Էշգըյան, Սղերդի շուկայի հրապարակին վրայ, յայտ համարձակ դաշոյնով վիրաւորեց թիւրք մսագործ ճամիատրօն։ Հարկ է ըսել թէ չարագործը ցարդ անպատիժ կը մնայ, ինչպէս շատ անգամներ։

Այդ միևնոյն օրը, գիշերով, Սղերդէն 2 ժամ հեռաւորութեամբ վրանաբնակ Սօհրան անուն քիւրդերէն 4 ջորի և 2 էշ իրենց ազի բեռներով կը գողցուին՝ Պշարի մարդոց կողմէ։

Մայիս 6. — Օսմանէ Էօմէրին և Մալա-Տիպօյին միջև ընդհարում մը տեղի կ'ունենայ։ Այս դէպքին մէջ Ա.-ին քով պահապան զօրքերէն, որոնք օգնութեան կերթան իրենց պաշտպանելու, 3 զինուոր և 17 մաուզերեան հրացան վրայ կուտան։ Այս մասին պիտի խօսենք ուրիշ առթիւ։

Մայիս 16-ին, իրիկուն, Սղերդի Հէյի Իալաֆ թաղեցիները հարս մը կը բերեն մօտակայ գիւղէ մը։ Տեսնելու արժանի էր հարսնուորներուն կացութիւնը։ 50-ի չափ երիտասարդներ՝ այնալը, սուրմալը, մաուզէր հրացաններով զինեալ և հեծեալ էին զինուորական կարգով։ Հետևակ զինեալներն շատուոր էին։ Հոծ բազմութիւն փողոցներու մէջ. մերկ սուրերով խաղալ, հրացանաձգութիւն։ Աւելորդ է ըսել, քաղաքը համայն ահ ու սարսափի մէջ ձգած էին։ Կառավարական պաշտօնեայք, ոստիկանք, բոլոր պաղարեամբ հանդիսատես կը լինէին միայն։

Մայիս 18.—Սղերդի թիւրքերէն 3 հոգի՝ Գատրը, Տահրը և Թէվֆիգ՝ գործով մը մինչև Գազամ գետակը կերթան, ճամբան կը հանդիպին Սըլօգա աշիրէթէն Միրզօ անուն քիւրդին, որուն կինը հերուընէ Սղերդի Էահգուտսազէյին ձեռքով առևանգուած էր։ Քիւրդը կ'ուզէ երեք երիտասարդները գերի տանել, բայց վերջիններէն մին վերջապէս կը յաջողի փախչել քիւրդին ձեռքէն մի քանի տեղերէն վիրաւորուած։ Իսկ երկուքը ամսեան մը չափ գերի մնալէ յետոյ կը թողուին։ Կառավարութիւն հոս ալ ոչինչ կրցաւ ընել։ Քիւրդը ինքն նայորդոր ազատ արձակեց գերիները։

Մայիս 21-ին լոտէցի պերուոր կիները, ըստ սովորութեան զարդարուած, իրիկուան դէմ մօտակայ հովիտը կը գիմեն իրենց ոչխարները կթելու։ Տեղացիներէն քիւրդ Մըսթէն և Էօմէր Հըսամ մի քանի ընկերներով ճամբան կը յարձակին անոնց վրայ և կ'առևանգեն գեղէն միակ գեղուհին՝ Սրբօ անուն հայ մանկամարդ կինը յղի վիճակի մէջ։ Այս մասին շատ դիմումներ եղան մինչև իսկ արդարութեան և ներքին գործոց նախարարութեանց, բայց կարելի չեղաւ ետ բերել մանկամարդ կինը։

Մայիս 28-ին ոճրագործ Սէլմօ անուն թիւրք երիտասարդը, որ արևով բանտէն խոյս կուտայ, թէև քանի մը ոստիկաններ ետևէն կը պնդեն 1-2 ժամ, բայց չեն կրնար կրկին ձերբակալել յիշեալը, իր կրակէն վախնալով։

Մայիս 30. — Սղերդի իսլամներէն Հաճի Տէվաս, իր տունը նորոգելու առթիւ, տեսնելով որ իր ունեցած տեղին վրայ ճաշակաւոր սենեակներ հիմնելու համար տեղ կը պակսի իրեն, դրացիական իրաւունքները յարգած ըլլալուն համար (՞), պէտք եղածին չափ կտոր մը (գրեթէ 1,000 զրշ. արժողութեամբ) ճնշման տակ և առանց ստակ մ'իսկ վճարելու կ'իւրացնէ՝ դրացի Գրիգոր անուն ազգայինի բակին մէջտեղէն։ Խեղճ հայը վախէն չի համարձակիր ուրիշի խօսել եղելութիւնը, թող թէ բողոքել։

(Կը շարունակուի)

ՀԱՅԿԱԿԱՆ ՊՐՕՊԱԳԱՆԴԸ ԵՒՐՕՊԱՅՈՒՄ

I. ԳԵՐՄԱՆԻԱ

(ՆԱՄԱԿ ԲԵՐԼԻՆԻՑ)

Անշնորհակալ, բայց և անհրաժեշտ մի աշխատանք է, որ մեր ընկերները կատարում են այսօր Գերմանիայի զանազան քաղաքներում, գլխաւորապէս Բերլինի մէջ։ „Ռէալական քաղաքականութեան“ այս երկրում ազգաբնակութեան լայն խաւերը դեռ նոր են իմանում, կարծէք, որ այնտեղ հեռաւոր Հայաստանում կատարւել և կատարւում են չինգիզխանական ոճիրներ, և որ Կանտի ու Շիլլէրի հայրենիքը պատասխանատու է այդ ոճիրների համար։ Ո՞վ է ասում, թէ քաղաքակիրթ աշխարհը ծանօթ է հայկական խնդրի աղեխարշ մանրամասնութիւններին...

Գէթ մխիթարական է այն հանգամանքը, որ այս կարծրացած, քարացած երկրում գտնւում են մտքի ու զգացմունքի ներկայացուցիչներ — և նրանց թիւը աճում է հետզհետէ — որոնք ոչ միայն խորապէս ներշնչւում են հայի տառապանքով, այլև հանրային կարծիքը լուսաւորելու պաշտօնն են ստանձնում։ Շատ աւելի լաւատես, քան մենք, նրանք մեծամեծ բարիքներ են սպասում այդ աշխատանքից և իրենց հեղինակաւոր ձայնով միշտ խրախուսում են մեզ։

Հայի և Հայաստանի մասին բանախօսութիւններ են արւել՝ յունուարի 20-ին Բերլինում՝ դօքտ. Ռ օ ր բ ա խ, յունուարի 24-ին Հալլէում՝ դօքտ. Ֆ ի ն կ է, փետրուարի 2-ին Բերլինում՝ Գ է օ ր գ Բ ր ա ն դ է ս, փետրուարի 16-ին Դարմշտատում, ինչպէս և փետրուարի 23-ին Միտվայդայում՝ տիկին Ի լ զ է Ֆ ր ա պ ա ն, գլխաւորապէս յեղափոխական Հայաստանի մասին, մարտի 9-ին Լայպցիգ։

Յունուարի 20-ի կոնֆէրանսին՝ բազմաթիւ հանդիսականների կողմից միաձայն ընդունւեց հետևեալ որոշումը.

«Ժողովը գտնում է՝

Որ հայերը Տաճկաստանում ներկայումս զուրկ են մարդկային ամենատարրական իրաւունքներից, մանաւանդ կեանքի, գոյքի եւ պատուի ապահովութիւնից.

Որ այդ ապահովութիւնը հաստատելու նպատակով՝ Բերլինի կոնգրէսի 61-րդ յօդուածով իրաւամբ սահմանուած են ռէֆորմներ հայ ժողովրդի համար, իբրեւ քաղաքակրթապէս վերին աստիճանի օժտուած մի ազգի.

Որ այդ յօդուածի չգործադրութիւնը Թիւրքիայի եւ եւրոպական պետութիւնների կողմից՝ մի մեծ պատճառն է Հայաստանի ներկայ պայմանների եւ Թիւրքահայերի դրութեան.

Որ եւրոպական ժողովուրդների բարոյական պարտաւորութիւնն է՝ աչքաթող չանել հայ ժողովրդի կարօտութիւնը եւ միջոցներ խորհել՝ դարմանելու նրան»։

—

Բայց առանձին ուշադրութեան արժանի է Գ ե օ ր գ Բ ր ա ն դ է ս ի ամսոյս 2-ին Բերլինում արած ատենախօսութիւնը, որ մեծ յուզմունք յարուցեց ժամուլի մէջ։ Հռչակաւոր դանիացի գրողը արտասանեց այդ երեկոյ այնպիսի խօսքեր, որոնց սովոր չէր գերմանական հասարակութեան ականջը և որ չէր վստահացել արտասանել նոյնիսկ սոցիալիստ Բեբնշտայն անցեալ յուլիսին կարդացած իր դասախօսութեան մէջ։

Philharmonie-ի դահլիճներից մէկում հաւաքւած էին Բերլինի բարձր հասարակութեանը պատկանող մի քանի հարիւր հանդիսականներ, որոնց շարքում աչքի էին ընկնում հռչակաւոր գրող Զուդերման, Գեօրգ Հիրշֆելդ, դօք. Ռայկէ, Բերլինի քաղաքապետը, դօք. Լեման և ևն։ Բրանդէսի դասախօսութեան նիւթը ոչ միայն Հայաստանն էր, այդ „ասիական Շվեյցարիան“, ոչ միայն հայ ժողովուրդն էր, „եւրոպական քաղաքակրթութեան այդ առաջապահը Ասիայում“, այլ նա կրում էր և քաղաքական բնաւորութիւն։ Իր առաջաբանում նա յայտարարեց, որ եկել է Կոպենհագից՝ „ի նպաստ Եփրատի հինաւուրց դժբախտ ժողովրդի“՝ համակրութիւն ստեղծելու գերմանական ազգի մէջ, „որի կառավարութիւնը պաշտպան է կանգնել թիւրքական արհաւրալից տիրապետութեան“։

Այնուհետև նա արւեստագէտ-գրողի զարմանալի հմտութեամբ սկսեց նկարագրել տաճկական ռէժիմի սարսափները, Սասունի և ուրիշ վայրերի կոտորածները. պատկերը հետզհետէ աւելի և աւելի զարհուրելի էր դառնում. հասարակութիւնը լսում էր խոր, լարւած ուշադրութեամբ. կանայք արտասւում էին։ Մի քանիսը նրանցից չկարողացան դիմանալ և յուզւած թողին դահլիճը։ Բրանդէս գոչեց նրանց ետևից. „Ինչ որ Բերլինի տիկինները մէկ անգամ չեն կարող լսել, նրանից հազար անգամ աւելի զարհուրելին ապրել են իրականապէս հայ կանայք“։

Ատենախօսը ուրագծեց հայոց հարցի պատմութիւնը և հասաւ ծանր ու կնճռոտ խնդրին. ո՞վ է արդեօք պատասխանատուն հայկական մեծ ողբերգութեան համար։ Այդտեղ նա վճռականապէս յայտարարեց, որ „առանց Գերմանիայի բարեկամութեան՝ Տաճկաստանը անկարող էր գործել 19-րդ դարի ամենամեծ ոճիրը“։

Այդ համարձակ և անկեղծ խօսքերն էին, որ խիստ բողոք յարուցին շովինիստ մամուլի մէջ։ Այդ վերջինը չէր կարող հաշտւել այն մտքի հետ, որ մի օտար գրող համարձակւի Գերմանիայի մայրաքաղաքում և բարձր հասարակութեան ներկայութեամբ՝ այդքան կծու ամբաստանագիր ուղղել գերմանական կառավարութեան դէմ...։

Սակայն այդ բարձր հասարակութեան ներկայացուցիչները, աւելի գիտակից հայրենիքի հմայքին, քան շովինիզմի տխուր հերոսները, չզլացան իրենց ծափահարութիւններն ու ամենաբուռն համակրութիւնները պատկառելի ատենախօսին, որի աջողութիւնը կատարեալ էր։

II. ՖՐԱՆՍԻԱ

(ՆԱՄԱԿ ՊԱՐԻԶԻՑ)

—

Մեր ընկերների և „Պրօ Արմենիա“-ի խմբագրութեան ջանքերով՝ ներկայ տարւայ փետրուարի 15-ին կազմակերպւեց այստեղ նմանը չտեսնւած հրապարակական ցոյց յօգուտ Հայաստանի և Մակեդոնիայի։ Կուսակցական պայքարի և բուռն ատելութիւնների այս ծանր ժամանակում այդպիսի մի ցոյց կարող է դիտւել իբրև մի անցք, մի իրօք ուրախալի երևոյթ, որ պատիւ է բերում Ֆրանսիային և մասնաւորապէս Պարիզին։ Պարլամենտական այլևայլ ֆրակցիաների ներկայացուցիչները, որոնք ամէն վայրկեան և ամէն մի հարցի առթիւ գրոհ են տալիս իրար դէմ մի տեսակ վայրենի հակառակորդութեամբ — փետրուարի 15-ի յիշատակելի օրը միացել էին մի յուզիչ համերաշխութեան մէջ՝ ցոյց տալու համար քաղաքակիրթ աշխարհին, որ Ֆրանսիան դեռ կանգուն է իր ասպետական ոգով ու ազատութեան իդէալներով, որ նա դեռ գիտէ ազգովին ներշնչւել

ճնշած ու մարանչող ազգերի ճակատագրով։ Հանգամանքը միմիթարական է՝ թէ իրեն, Ֆրանսիայի համար, թէ մեզ, հայերիս և թէ բոլոր ճնշածների համար։

Հինգ հազարի չափ բազմութիւն հապճեպով ներս էր խուժել Château d'Eau-ի թատրոնական դահլիճը. 2,000 հոգի մնացել էին դուրս։ Ոչ մի անկարգութիւն՝ այդ ահագին ամբոխի դասաւորման միջոցին։ Ոչ մի անկարգութիւն նաև՝ ատենախօսութիւնների միջոցին։

Աւելի քան հինգ ժամ այդ գոյնզգոյն հասարակութիւնը խոր ու պատկառոտ լռութեան մէջ և լարած ուշադրութեամբ հետևում էր բոլոր հռետորների ճառերին [1]), երբեմնապէս ընդմիջելով բուռն ու երկարծափահարութեամբ։

Նախագահում էր Դ'Էտուրնել դը Կոնստան, Ֆրանսիայի պատուիրակը Հաագի խորհրդաժողովին։ Ճառեր խօսեցին՝ Դրնի Կոշէն, Ա. Լեռուա Բոլիօ և Լեռօլը— ծայր աջակողմեաներից. Պրէսանսէ և Ժօռէս — ծայր ձախակողմեաներից։ Դ'Էտուրնել իր կորովի ճառի մէջ մատնացոյց անելով դիւանագիտութեան վրիպումները, յիշեց իմիջի այլոց Գլադստօնի իրեն ուղղած յորդորը՝ „Զբաղուեցէք Հայաստանով. պաշտպանել Հայաստանը՝ ասել է պաշտպանել Եւրօպայի դատը“։ Դրնի Կոշէն, պարլամենտի ամենահամակրելի պահպանողականը՝ խօսեց երկարօրէն նոյնպէս Հայաստանի մասին։ „Պէտք է, ասում էր նա իր եզրակացութեան մէջ, որ հանրային կարծիքը ստիպէ մեր պետական գործիչներին՝ միջամտել առանց յապաղելու, Ֆրանսիայի հմայքը պահպանելու համար. և ես այդ պահանջում եմ, ես, քրիստոնեայս, յանուն մարդկային անձնաւորութեան, որը երկրագնդի բոլոր ծայրերում ստեղծած է „ազատ“ և հաւասար Աստուծոյ առաջ“։

Մեր բարեկամ Պրէսանսէն հմայեց հանդիսականներին իր պատմական-քաղաքական ճառով, որ տևեց աւելի քան մի ժամ։ Թէև մանօտօն ու ծանրաբեռնուած պատմական անհամար փաստերով՝ այդ կլասիկ ճառը լսեց սկզբից մինչև վերջ խորին ուշադրութեամբ. շատերն են խոստովանում, որ վաղուց պարիզեցին չէր լսել հրապարակական ամբիոններից այդպիսի նիւթալից, գիտական դասախօսութիւններ։

Զինուած պատմական ու սոցիոլոգիական խորունկ ծանօթութիւններով՝ մեր բարեկամը ուրուագծեց ա ր և ե լ ե ա ն խ ն դ ի ր ը սկսած այն չարաբաստիկ օրից, երբ թիւրքը տիրեց Կ. Պոլին։ Անցնելով ներկայ շրջանին՝ նա ծանրացաւ Հայաստանի ու Մակեդոնիայի արդի կացութեան վրայ, նկարագրեց այդ երկրների աշխարհագրական, ազգագրական ու քաղաքական պայմանները և գուշակեց նորանոր փոթորիկներ, որոնք պիտի առաջ գան անխուսափելիօրէն, եթէ դիւանագիտութիւնը անտարբեր մնայ կամ թէ գոհանայ աննշան ու թղթի վրայ միայն գրած ռէֆօրմներով։

Ատենախօսը առաջարկում է խոշոր գծերով իր դիւանագիտական նախագիծը Արևելքի համար. 1) Երբէք չբաժանել հայկական հարցը մակեդոնականից. 2) Զմոռանալ այն, ինչ որ ձեռք է բերուած արդէն, այսինքն խոստացուած ռէֆօրմները. 3) Զվստահիլ սուլթանին, այլ վերահսկել նրա գործողութիւններին, եւրոպական մի յանձնաժողով հաստատելով։ Վերջապէս պէտք է, ըստ Պրեսանսէի, կիրառել Հայաստանում և Մակեդոնիայում նոյն ռէժիմը, որ հաստատել է 1881-ին արևելեան Ռումելիայում։

Բաւական չէ գործել հարւածը առաջանալուց յետոյ,— եզրակացրեց Պրէսանսէ, խօսելով մասնաւորապէս Դելկասէի քաղաքականութեան մասին — պէտք է հարւածները կանխել. Ֆրանսիան հնարաւորութիւն ունի որոշ նախաձեռնութիւններ ստանձնելու. բոլոր պետութիւնների համաձայնութիւնը անհրաժեշտ չէ։

Այնուհետև բեմ դուրս եկաւ որոտընդոստ ծափահարութիւնների մէջ հռչակաւոր սոցիալիստ տրիբունը— Ժան Ժօռէս։ Պրէսանսէն ամէն բան ասել էր արդէն իր սքանչելի ուսումնասիրութեան մէջ. Ժօռէսին մնում էր պերճախօսութեան մի ուժգին թափով ելեքտրականացնել հազարաւոր բազմութիւնը և մի վերջին ու որոշակի յորդոր ուղղել Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրին։

Այդ սքանչելի միտինգը վերջացաւ ընդհանուր գոհունակութեան մէջ և խանդավառ ու անվերջանալի ծափահարութեամբ էր, որ ընդունեցին Անատոլ Լեռուա Բոլիօի բերանով կարդացուած որոշումները.

«Չորս հազար ֆրանսիական քաղաքացիներ, տարբեր կարծիքների պատկանող, հաւաքուած Château d'Eau-ի թատրոնական դահլիճում,

Նկատելով Հայաստանի եւ Մակեդոնիայի ազգաբնակութեան անուրանալի վիճակը եւ դէպքերի յարաճուն վտանգաւորութիւնը,

Նկատելով, որ այդ վիճակը զրգռիչ մի հանգամանք է հանրային խղճմտանքի համար եւ մի վտանգ՝ ընդհանուր խաղաղութեան տեսակէտից,

Նկատելով, որ միմիայն Բերլինի դաշնագրի գործադրութիւնը՝ Հայաստանում ու Մակեդոնիայում՝ կարող է վերջ դնել իրերի այդ անտանելի վիճակին,

Նկատելով այն հրամայական պարտքը, որ Բերլինի դաշնագիրը առաջադրում է նրա ստորագրողներին,

Յայտնում են ցանկութիւն, որ Ֆրանսիական կառավարութիւնը գործէ կորովի կերպով, որպէս զի կարողանայ վերջապէս գլուխ բերել Բերլինի դաշնագրի 23 եւ 61 յօդուածների իրագործումը, համաձայն 1882 թ-ի օգոստոսի ստատոտների եւ 1895 թ-ի մայիս 11-ի մէմօրանդումի, եւ որպէս զի դադարեցուի եղերնափորձերի այն չափազանց երկար շարքը, որոնք տեղի ունեն Թիւրքիայում մարդկայնութեան դէմ, առանց խարութեան ցեղի, ազգայնութեան եւ կրօնի»։

III. ԲԵԼԳԻԱ

Հայ ժողովրդի Բրիւսէլի բարեկամները, իբրև արտայայտութիւն իրենց համակրութեան դէպի Բալկանի և Փոքր Ասիայի տառապող ժողովուրդները, Բելգիայի մայրաքաղաքում կազմեցին նոյնպէս մի բողոքի-միտինգ։ Երկու ճառախօսներ՝ Հ ե կ տ օ ր Դ ր ն ի և Է մ ի լ Վ ա ն դ ե ր վ ե լ դ, պատգամաւորներ, ցնցող շեշտերով բողոքեցին սուլթանական բռնապետութեան եւ եւրոպական դիպլօմատիայի մեղսակից անգործնէութեան դէմ։ Ժողովը քէֆարկեց և միաձայն ընդունեց Պարիզի միտինգի բանաձևը, որ առաջ բերինք վերև։

IV. ՇՎԷՅՑԱՐԻԱ

Ե. Հ. Ո. Միութեան նախաձեռնութեամբ, մարտի 5-ին տեղի ունեցաւ Victoria hall-ի դահլիճում հրապարակական մեծ ժողով՝ 2,000-ի չափ բազմութեան ներկայութեամբ։ Նախագահում էր Ադրիան Լաշնալ շվէյցարական հանրապետութեան երբեմնի նախագահը։ Ատե-

1) Ատենախօսութիւնների սղագրութիւնը կ'աշխատենք շուտով հրատարակել մի յաւելածով։

նախօսեցին՝ Պիէռ Կիառ՝ Հայաստանի և դօքտոր Լարդի՝ Մակեդոնիայի մասին։ Այս ժողովը նոյն շարժառիթն ունէր, ինչ որ և Պարիզի հրապարակական ցոյցը, այն է՝ կապել Հայոց հարցը Մակեդոնականի հետ և պահանջել միևնոյն դաշնագրի երկու յօդուածների միանագ լուծումը։

Ժընևի հասարակութիւնը — ուր աչքի էին ընկնում բազմաթիւ պրոֆէսօրներ ու նշանաւոր քաղաքացիներ — ամբողջ երեք ժամ ուշի ուշով հետևեց երկու ատենախօսութիւններին, որոնց նիւթը այնքան կենդանի և այնքան տխուր այժմէութիւն ունի։ Նախագահ Ադրիան Լաշնալի բացման ճառից յետոյ՝ դօքտոր Լարդի հակիրճ նկարագրեց մակեդոնացիների յուսահատ վիճակը, որը ծնունդ է տուել ներկայ շարժումներին։ Զատագովելով այդ շարժման հերոսներին և յայտարարելով ապստամբութիւնը իբրև միակ ու գերագոյն միջոց ազատագրութեան, ատենախօսը քննադատեց աւստրօ-ռուսական վերջին ռէֆօրմների ծրագիրը, որը, իր ասելով, ողորմելի բան է և պիտի մնայ անիրագործելի, քանի որ չկայ Եւրօպայի կողմից հսկողութեան խնդիր։

Մի քանի մոգական պատկերներ, որ իր ատենախօսութեան վերջում ներկայացրեց Լարդի, մօտաւոր գաղափար տուին հանդիսականներին տաճկական գազանութիւնների մասին Մակեդոնիայում։

Պիէռ Կիառ, նախ քան իր ատենախօսութեան դիմելը, ներկայացրեց նոյնպէս մի քանի մոգական պատկերներ հայկական կոտորածներից, որոնք խոր տպաւորութիւն գործեցին։ Այնուհետև նա սկսեց պատմել, աւելի ծանրացաւ ներկայի վրայ, ցոյց տուեց, որ այդ ներկան մի ահռելի հետևողութեամբ շարունակում է անցեալը — հայ ժողովրդի բնաջնջման գործը։ Հայ տարրը ջնջել են ուզում այն պատճառով, որ նա գրկել է եւրօպական քաղաքակրթութեան դրօշը, որ նա ցոյց է տալիս փայլուն ընդունակութիւններ առաջադիմութեան ուղիի վրայ։ Խօսելով Զէյթունի և ուրիշ տեղերի շարժումների մասին և ներբողելով հայ յեղափոխականի անձնուիրութիւնն ու արիութիւնը, Կիառ յայտարարեց որ միմիայն կռիւն է, որ կարող է ստիպել մի քայլ անել դէպի ռէֆօրմները։

Նախագահը փակեց ժողովը՝ սրտառուչ ու ազդու մի կոչ ուղղելով Եւրպային՝ յօգուտ Հայաստանի և Մակեդոնիայի։

ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏՈՒՄ

Ֆրանսիս դը Պրեսանսէ մարտի 10-ին արտասանեց պատգամաւորական ժողովում մի նշանաւոր ճառ, ուր շօշափած էին մակեդոնական և հայկական խնդիրները։ Երկար ծանրանալով մակեդոնական հարցի վրայ և զգուշացնելով արտաքին գործերի մինիստրին Բալկաններում ստեղծուած վտանգաւոր դրութեան նկատմամբ՝ Պրեսանսէն ընդհանուր ուշադրութեանմէջ յիշեցնում է պարլամենտին և Դելկասէին Հայաստանի դատը.

«Ես կուզէի աղդարարել ձեզ մի փաստ, որ, ըստ իս, վերին աստիճանի ծանրակշիռ ու վտանգաւոր է. Հայաստանը դուրս է ձգուած բանակցութիւններից. չէ՞ք գտնում արդեօք, որ դա վիրաւորանք է, ուղղուած Եւրօպայի խղճին (ծափահարութիւններ), եւ որ դա նշանակում է՝ ապահովել սուլթանի յաղթանակը։ Եթէ տարուց իվեր սուլթանը այնքան յոգնեցրել է մեր համբերութիւնը, որ մենք այլևս դադարում ենք խօսել նրա հետ Հայաստանի մասին։ Մենք չենք պահանջում այլևս Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածի իրագործումը, մենք ջնջում ենք անցեալը. մենք այժմ ուրիշ գործ ենք անում. այդ բանակցութիւնների մէջ Եւրօպան, այդ նոր Պենելօպը, շարունակ քանդում է ցերեկը, ինչ որ նա փորձել է շինել գիշերը... Բոլորին յայտնի կոտորածներից յետոյ՝ դիւանագիտութիւնը կարողացաւ միայն երկչոտ բողոքներ լսեցնել... դիւանագիտութեան սնանկութիւնը չէ՞ դա արդեօք... Ժամը հասել է ոչ միայն Ֆրանսիայի, այլև Բերլինի դաշնագրի բոլոր ստորագրողների համար՝ ծաւալելու իրենց բոլոր ուժը եւ գործադրելու, ամենալայն չափերով, իրենց բոլոր իրաւունքը»։

Բուռն ծափահարութիւններ ծածկում են Պրեսանսէի գեղեցիկ վերջաբանը և պարլամենտի մեծամասնութիւնը շնորհաւորում է նրան։

Ի պատասխան Պրեսանսէին՝ մինիստր Դելկասէ յայտնում է, որ նա կարեկից է հայերի և մակեդոնացիների տառապանքներին և որ Ֆրանսիան բնաւ չի հրաժարուել իր տրադիցիաներից. նա աւելացրել է իր գործակալների թիւը Հայաստանի մէջ՝ ուժեղացնելու համար այն հսկողութիւնը, որը ջլատում է չար դիտաւորութիւնները։ Ինչ որ մենք անում ենք Հայաստանի համար, շարունակեց Դելկասէ, նոյնը անում ենք և Մակեդոնիայի համար, և երեկուանից չէ, որ մենք ճիգ ենք թափում հարկադրելու սուլթանին, որ նա իրագործէ ռէֆօրմները։

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

* * *

Հարաւային սլավոնների կլուբին պատկանող՝ Ռայխսրատի անդամներ և պարլամենտից դուրս գտնուող քաղաքագէտներ՝ կազմել են Վիեննայում մի կոմիտէ՝ բալկանեան ժողովուրդների շահերը պաշտպանելու նպատակով։ Այդ կոմիտէն իր վերջին նիստում՝ իր ցասումը յայտնելով տաճկական աւերիչ ու կոտորող ռէժիմի դէմ, որոշել է աշխատել ի նպաստ Բերլինի դաշնագրի 23 և 61-րդ յօդուածների իրագործման։ Կոմիտէն մտադիր է առաջիկայ գարնանը մի աւելի մեծ հրապարակային ցոյց կազմակերպել Վիեննայում, որի համար կը հրաւիրուեն արտասահմանում նոյն ուղղութեամբ գործող քաղաքագէտներ ու հրապարակախօսներ։

* * *

Temps լրագիրը „Մակեդոնացիներուն կարծիքը“ վերնագրով, Վիեննայէն ստացած իր թղթակցին հետևեալ տողերը արտատպած է.

«Իր հայրենիքի մէջ շարունակող պրօպագանտին մօտէն ծանօթ մակեդոնացի մը, ինձ շատ հետաքրքրական ծանօթութիւններ տուաւ հոն հաստատուած կազմակերպութեան ձգտումներուն եւ դիտաւորութիւններուն նկատմամբ։ Ցիշեալ կազմակերպութիւնը շատ աւելի ուժեղ է քան թէ Սոֆիա գտնող մակեդոնական մասնաժողովները։

Նա չէ բաղկացած այն մակեդոնացիներէն, որոնք Բուլկարիա զաղթած եւ անոր ընդարձակելուն գաղափարակից են. բոլորովին Մակեդոնիա ապրող տեղացի վարժապետներ եւ քահանաներ զայն հաստատած են, եւ որոնք կողմնակից ըլլալով «Մակեդոնիան մակեդոնացիներուն» գաղափարին, հակառակ են բուլկարներու, յոյներու, սերպերու, ռումանացիներու, որ ուրիշ պահանջ չունին, բայց եթէ Մակեդոնիան կտոր կտոր ընել։

«Ներքին կազմակերպութիւնը» չդեկա-

վարուիր գուրսը գտնուող ՝մանաժողովներու պետերով՝ Ջօնչէվ, Միխայելօվսքի, Սարաֆօվ եւայլն, թէեւ այս վերջինս երբեմն ազդեցութիւն ունեցած է անոր վրայ, բայց այն ալ չափազանցուած է։ Նա գաղտուկ պետեր ունի, որ իրենք ալ Մակեդոնիա կը գտնուին։ Անշուշտ տրամադիր է ընդունելու այն օգնութիւնը, որ Սօֆիա գտնուող մակեդօնացի խումբերը իրեն կ'առաջարկեն, տաճկական լուծէն ազատելու համար։ Բայց եւ այնպէս իրեն կը վերապահէ որոշել գործադրութեան յարմար միջոցը, երբոր երկիրը ապստամբութեան պատրաստ ըլլայ յաջողելու բաւական յոյսերով։

Երբ որ անցեալ աշնան ապստամբական փորձեր եղան՝ Ջօնչէֆ-Միխայելօվսքի խումբի կողմէն՝ չուզեց անոնց մասնակցիլ, որովհետեւ միջոցը յարմար գտած չէր։ Արդէն այս փորձերն ալ չյաջողեցան։ Ինչպէս նաեւ հակառակ Սարաֆօվ-Սթանիշէֆ խումբի կողմէ եղած ճնշման, չպիտի օգնէ յառաջիկայ գարնան ըլլալիք ճիգերուն։ Դեռ երկիրը բաւականաչափ պատրաստ չէ. խումբերը չատ բաժանուած են եւ մանաւանդ Բուլկարիա կարող չէ զինուած Տաճկաստանը յաղթելու, ինքզինքը պաշտպանուած կըզգայ Գերմանիոյ եւ Գիյոմ Բ. կողմէ։ Ուրիշ մեծ արգելք մ'ալ ռուս-աւստրիական համաձայնութիւնն է, որ Պալքաններուն մէջ ամփոփութիւն պահելու համար եղած է։ Մակեդօնական ներքին կազմակերպութիւնը կատարեալ գիտակցութիւն ունի բոլոր այս դէպքերէն, կըզգայ առնցմէ յառաջ գալիք դիմադրութեան կարեւորութիւնը եւ որուն համար ալ կարող է առայժմ հանդարտ մնալ»։

Ն Ւ Ի Ր Ա Տ Ւ Ո Ւ Թ Ի Ւ Ն

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕՆ *ստացած է՝*

ԱՒԱՋԸ ՈՎԿԻԱՆԻ Լուսինեան ընկերութիւնից 20 ֆրանք։

ՓՕՔՇԱՆԻ (Ռումանիա) Ք.-ի „Միաբան“ խումբէն մնացեալ (Ս. Պալըքճ. միջոցով) 2. 30 ֆր., Ս. Պալըք.-ից (Փօքշան) 5 ֆր., Գ. Տիգր.-ից (Փօքշան) 5 ֆր., Վահ. Մկրտիչ. (Րէմնիկուսարաթ) 5 ֆր., Օհան. Կըլըճեանից (Պաւլէա) 5 ֆր. (ընդամէնը 22. 90 ֆր.)։

ՓՐԸՑԲՈՒՐԳԻՑ (Վըրդ.-ից) 5 ֆրանք։

ԱԹԷՆՔԻ „Կիլիկիա“ խմբէն՝ Ս. Ռումը 2 տրախմի, Կայծ, Հուր, Մ. Մխիթար, Ս. Պաղտասարեան, Ջ. Մ. Մ., Տաւրօսցի, Սէֆեր, Յ. Ք. Պիբէօնից 5-ական տրախմի, Ս. Ա. 3, Տ. Մ. Փափազ, Ե. Մ. Կօտող, Սափրիչ Գ. 2-ական, Սուր հարւածեան 5 ֆրանք արժաթ։ Գումար 56 տրախմի։

ՑԻՒՐԻԽԻՑ Մարզպետունիի միջոցաւ 79 ֆր. 60 ս., հանգամանկ. հետեւեալ կերպով՝ պրօֆէսօր Ցաք. 10 ֆրանք, օր Շ. Ն. 10, Արմէնիա Լիբէրանտա 20, բժիշկ Ա. 5, Մարզպետունի 5, հայ ուսանողուհի մը 2, ռուսաստանցի ուսանողուհի մը 2, Գ. Խ. 2, Ս. Ք. 2, հրէայ ուսանողուհիներ օր. Կուլակօվսկի 3, օր. Սիրկիս 3, հայ ուսանողուհիներ օր. Իզ. Ա., օր. Ն. Ա., Խ. Տ., Գ., Յ. 3-ական ֆր., Բէրնշտայնի գրքոյկէն 60 սանտիմ։

ԾԻԲՈՒՏԻԻՑ (Հաբէշստան) Գ. Ար.-նի միջոցով 86 ֆրանք 50 սանտիմ, հանգամանկւած հետեւեալ անձերից՝ Գ. Ա. 25 ֆր., Մ. Գ. 25, Պ. Ը. 10, մի հնդիկ 5, Տ. 21. 50։

Կ. Ու. Յ. Կ. 60 ռուբլի (159 ֆրանք)։

Ընդհանուր գումար 429 ֆրանք։

ԱՄԵՐԻԿԱՅԻ *Կեդր. Կոմիտէն՝*

ՓՐՕՎԻՏԷՆՍԻ Կոմիտէին ձեռամբ.

Հ. Ա. 100 դօլար, Ճ. եղբ. եւ հօրեղբ. 52 դօլար, Մ. Խ. 50, Ա. Ն. 50, Տ. Խ. 30, Ռ. Պ., Դ. Ձ., Նախօ, Ն. Մ., Հ. Փ., Բաքկէն եւ Միքերոզ 25-ական, Յ. Մլ., Յ. Մր., Գքօ, Ս. Մ., Գ. Ս., Ս. Խ., Ն. Թ., Ն. Փ. 20-ական, Ա. Պ. 18, Սալման 17. 50, Կ. Փ. 17, Ք. Յ., Ս. Ա., Յ. Շ., Յ. Ա., Ոգի, Գ. Փ., Յ. Տ. Թ., Հապէշ, Արամազդ, Ա. Ս. Շօշիկ 16-ական, Մ. Ղ., Սիր. Մ., Ստ. Մ. 15-ական, Ս. Ն. 14, Հաճի Պօղ. 12, Պ. Ա. 11, Մնօ, Յ. Ռ., Ս. Պ., տիկ. եւ եղբ. Փ., Յ. Վ., Ե. Ս., Լ. Ե. 10-ական, Ղ. Պ. 8, տիկ. Թ. Ձ. 6, Կ. Ե., Եղ. Պ., Կ. Տ. Յ., Մ. Գ., Կ. Տ., Յ. Օ., Մ. Մ., Ա. Մ., Աղ. Մ., Գ. Ա., Պ. Հ., Ս. Լ., Կ. Ն., Մ. Գ., Ս. Վ., Ա. Ս. (նախորդ տարւայ հաշւէն) եւ Յ. Լման 5-ական, Ս. Թ., Կ. Մ., Թ. Մ. 4-ական, Աս. Խ., Անդ. Խ., Ա. Պ., Յ. Պ. 3-ական, տիկ. Յ. Պ., Ե. Դ., Մ. Ռ., Մ. Վ., Տ. Յ., տիկ. Մ. Մ., Կ. Թ., Կ. Ն. 2-ական, Ն. Մ., Գ. Պ., տիկ. Ե., Ն. Ա., տիկիններ Տ. Ս., Շապէ Պ., Ե. Պ., Ս. Յ., Պ. Մ., Պ. Ռ., Մ. Տ. Մ., Ա. Ա., Մ. Ռ., Ս. Ս., Դ. Ջ., Գ. Ք., Պ. Ա. եւ երեք անծինք մէկ-ական, Վ. Սիւնի եւ Յ. Տ. 50-ական սէնտ։ Գումար 1160 դօլար 50 սէնտ։

Սերոբ փաշայի պատկերներէն (Տ. Խ. եւ Դ. Յ.-ի ձեռամբ) 50 դօլար, Սասնոյ ի նպաստ հանդէսէ մը՝ Լեռ. Դեր. խմբէն 52 դօլար 50 սէնտ, Հ. Յ. Դ. Ջինանշաններէ եւ Սերոբ փաշայի նշաններէն 264 դօլ. 20 սէնտ, անդամական եւ համակրական ժողովներու պնակներէն 33 դօլ. 45 սէնտ, ընկերական հանգանակութենէ մը 13 դօլ. 50 ս.։ Գումար 413 դօլ. 65 սէնտ։

„Շնորհակալութեան“ օրւան հացկերոյթին մէջ հանգանակւած ի նպաստ բանտարկեալներու.—Մ. Ղ. 13. 50 դօլար, Ն. Փ., Վզ., Տմճ., „Երկու ընկեր“ 2-ական, երկու մանուկներ, Արտաքի, եւ Վարդան 1. 65-ական, Պ. Թ., Յ. Կ., Ն. Թ., Պ. Ա., Տ. Խ., Ե. Պ., Մ. Գ., Վ. Թ., Դ. Յ., Սթլ., Լ. Ե., Գ. Ս., Մ. Ս., Հ. Ա., Ն. Մ., Թ. Մ., Պ. Հ., Պ. Յ., Ս. Մ., Մ. Պ., Մ. Խ., Յ. Մ., Յ. Պ., Պ. Կ. մէկ-ական, հինգ անծինք 5 դօլար 30 սէնտ։ Գումար 53 դօլար 95 սէնտ։

Ընդհանուր գումար 1628 դօլար 10 սէնտ։

ՓՐԸՋՆՕՅԻ Կոմիտէին ձեռամբ.

Մ. Մ. 20 դօլ., Ճ. Տէմօսթէն 20, Խ. Ա. 17, Վ. Ա. Մ. եղբ. 15, Ա. Թ. 13, Ա. Ջ. 11, Ա., Ա., Օ. Խ., Մ. Ճ., Յ. Ն., Մ. Ռ., եւ Ա. եղբարք 10-ական, Պ. Խ. 8, Յ. Յ.-ի նոր մանչը, Յ. Ռ., Թիւ 5 մանչուս, Ղ. Մ., Ղ. Պ., Դ. Յ., Ջ. Ա., տիկ. Պ., Գ. Մ. 5-ական, տօք. Բ., Յ. Ա., Ա. Ձ. մէկ-ական Մ. Պ. 10 սէնտ։ Գումար 212 դօլար 10 սէնտ։

ՄՐԳԱՍՏԱՆԻ *Կեդր. Կոմիտէն՝*

1901 սեպտ. 1-ից մինչեւ 1902 թ. վերջը.—Մնացորդ անցեալից 32 ռ. 22 կ., օր. խմբից 90 ռ. 30 կ., Ինտելիգենտներից 40 ռ., Վաճառական. Ա. խմբ. 40, Վաճառական. Բ. խմբ. 119. 50, Գործակատ. Ա. խմբ. 40, Գործակատ. Բ. խմբ. 74. 50, Արհեստաւորներ 160. 49, Վարժապետ. 8. 40, Սովորող Գ. 40, Սովորող Ս. 15, Ելզեւուց 259. 20, Մոսկվայից Գէ. 100, վիճակ. օրիորդ. 20, Քաղաքամասից 11. 75, Շամիլից 20, Գրքերից 14. 30, Տէրտէրից 5, Քեռուց 15, Տասդանից 15, Ազատ դաշտից 338, Արփաչայից 87, Արարատից 323. 50, Ալիխամարից 28, Հախվերես 12, „Աղասի“ խմբ. 15, Բարձր տեղից (Քահրար) 110, նոյն տեղից անդամավճար 55, Վարդենի շէն 10. 75, Դիլիջանից Օհ.-ի միջոցով 48, Վանեցուց 25, Մեծ քաղաքից 50, Սրբավայրից (Քասախից) 75։ Գումար 2297 ռուբլի 91 կոպէկ։

ՎԻԾԱՊԻ *Կեդր. Կոմիտէն՝*

Փէնըլօն 50 դահեկան, Գ. Կ. Վրէժ 60, Կացին 12. 20, Տօրք 5, Հիդրա 35, Կամք 85 դահ.։ Գումար 247 դահեկան 20 փարա։

ՆԱԽԱՅԱՆԳՍՏԻ *Կեդր. Կոմիտէն՝*

Մի քանի երիտասարդների ձեռամբ 70 ռուբլի „Պրօ Արմէնիա“-ի համար։ Նոյն երիտասարդների ձեռամբ ծննդեան առթիւ հանգանակւած հետեւեալ անձերից՝ № 55՝ 20 ռուբլի, Ոմն 20, № 56՝ 10, Ոմն 10, № 57՝ 5, № 10՝ 10, № 12՝ 6, № 39՝ 2, Ա. 1, Ոմն 1, Ոմն 2, Ոմն 5, Ոմն 5, Ոմն 5, № 15 1, № 17՝ 1, № 18՝ 1, № 19՝ 2, № 20՝ 1, Ոմն 5, Հով 1, Ոմն 1, № 367՝ 5, Ոմն 2, Ոմն 0. 50, Ոմն 1, Ցարազ 5, Մաշօ 0. 50, Երէց 5, Կարապետեան 1, Երեք ընկեր 3, Ոմն 1, Ոմն 5, Բ. Տ. Մ. 3, X. 2, Ոմն 2, Ոմն 2, „Տարօնեցի“ խմբ. 15, „Վիշապ“ խմբ. 30, „Սրպիհիթ“ խմբ. 25, ԶՈՐԱՓՈՐԻ „Մայր“ խմբ. 55, „Արուսեակ“ խ. 28. 68, „Ախոյեան“ խմբ. 30. 40, „Փիսոն“ խմբ. 13. 30, Մէկ րուբլուց 20 ռ.։

Գումար 438 ռուբլի, 38 կոպէկ։

ՎՐԻՊԱԿ.— „Դրօշակ“-ի № 9-ի մէջ տպւած է ԳԱՂԹԱՎԱՅՐԻ „Եգիպտացի“ խմբի անդամավճարներից 10. 70, պիտի լինի 19. 70։

ՖԻԼԻՊՊԷԻ *Կոմիտէն՝*

Զետրոս Սէրէմճեան եւ ընկերների նահատակութեան տարեդարձի առթիւ կազմակերպւած երեկոյթից 285 ֆրանք։

Խմբագրութեանս դիմել Հետեւեալ Հասցէով՝

Rédaction du „Droschak“, Genève (Suisse)